ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆ (ՀԱՆ) ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՁԵԿՈՒՅՑ

ՓՈՂԸ ՀՈՏ ՉՈՒՆԻ. ՍԱՍ-Ի ԱՐՏԱԿԸ՝ ՆԱԽԿԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԵՆԱՐԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՓԱՇԻՆՅԱՆԻ «ՀԱՄԵՂ ԳՈՐԾԸՆԿԵՐ»

Գործող անձ՝ **Արտակ Սարգսյան**



Հազար դոլարանոց ապխտած կոկորդիլոս: Սա ո՛չ փոխաբերություն է, ո՛չ քաղաքական մականուն: Խոսքն իսկական կոկորդիլոսի մասին է, որը 2013 թվականի դեկտեմբերին SAS սուպերմարկետների ցանցն առաջարկում էր ունևոր հայերի ամանորյա սեղանի համար: Երկարությունը՝ իննսուն սանտիմետր, գինը՝ 380 հազար դրամ: Ապագա վարչապետ Նիկոլ Փաշինյանի ընտանիքի հետ կապված «Հայկական ժամանակ» թերթն այն օրերին հեգնում էր՝ երևի գնորդները հույս ունեն, որ գալիք տարում իրենք էլ կոկորդիլոս կդառնան:

Սակայն արտառոցը միայն խանութների տեսականին չէր: Ցանցի սեփականատեր Արտակ Սարգսյանի՝ ժողովրդի մեջ վաղուց ՍԱՍ-ի Արտակ անունով հայտնի գործարարի քաղաքական կենսագրությունն էլ պակաս ուշագրավ չէր:

Նա համառորեն ձգտում էր պատգամավոր դառնալ, մի կուսակցությունից մյուսն էր անցնում, կորցնում մանդատն ու կրկին հայտնվում խորհրդարանում:

Այդ ընթացքում ընտանեկան բիզնեսն ընդլայնվում էր: Կոշիկի առևտրին հաջորդեցին սուպերմարկետները, ռեստորանները, միջազգային բրենդներն ու արտերկրում գրանցված ընկերությունները: Առևտրային կայսրության ցուցափեղկից այն կողմ Կիպրոսում ու Վիրջինյան կղզիներում գրանցված օֆշորային ընկերություններն էին, սեփականատերերի կազմում ընդգրկված ազգականներն ու ընկերությունները խորհրդանշական 100 և 200 լարիով վերագրանցելու գործարքները:

ՍԱՍ-ի Արտակի շուրջ տարիներ շարունակ պատմություններ էին ծավալվում, որոնցից յուրաքանչյուրը կարող էր քաղաքական երգիծանքի նյութ դառնալ: Բավական է հիշել SAS-ի աշխատակիցների ժողովի աղմկահարույց ձայնագրությունը. նրանցից պահանջում էին ձայներ հավաքել ցանցի սեփականատիրոջ համար: Կամ «Ձիբիլիքսը», երբ աղբամանից հայտնաբերվեցին ենթադրյալ ընտրակաշառքի մասին վկայող փաստաթղթեր:

Նախկին իշխանության օրոք մամուլում Արտակ Սարգսյանի անունը հիշատակվում էր Սերժ Սարգսյանի վարչակարգի հավանական ֆինանսական հենարանների շարքում: Գրում էին նաև, որ նա այդպես էլ անպատիժ է մնալու: Բայց եկավ թավշյա հեղափոխությունը, և պատմությունը նոր ընթացք ստացավ: ՀՀԿ նախկին պատգամավորը լքեց կուսակցությունը, սատարեց Նիկոլ Փաշինյանի նախաձեռնություններին, իսկ շատ չանցած՝ լրագրողներին արդեն վստահեցնում էր, թե նոր իշխանությունների հետ միշտ էլ լավ հարաբերություններ է ունեցել:

Ուշագրավ ընթացք ունեցան նաև SAS-ի ու Փաշինյանի ընտանիքի հարաբերությունները: 2013 թվականին «Հայկական ժամանակը», որի գլխավոր խմբագիրն Աննա Հակոբյանն էր, ծաղրում էր ամանորյա կոկորդիլոսների վաճառքը: Իսկ 2019 թվականի մայիսին «Ժպիտի քաղաք» հիմնադրամը, որի հոգաբարձուների խորհուրդն արդեն գլխավորում էր վարչապետի կինը, շնորհակալություն էր հայտնում SAS Sweet-ին: Ընկերությունը հիմնադրամին էր փոխանցել հրուշակեղենի հատուկ տեսականու վաճառքից ստացված միջոցները, իսկ հիմնադրամը նրան անվանել էր իր «համեղ գործընկերը»:

ՍԱՍ-ի Արտակի անունը շրջանառվեց անգամ 2020 թվականի նոյեմբերի դրամատիկ օրերին՝ 44-օրյա պատերազմում կրած պարտությունից հետո, այն էլ՝ բավական անսովոր առիթներով: Նախ նրան մեղադրեցին իշխանամետ «ֆեյքերի ֆաբրիկաները» ֆինանսավորելու մեջ, ապա նրա անունը կապեցին առեղծվածային «չինացի թիկնապահների» հետ: Այդպես էին կոչում չինարեն գրություններով համազգեստ կրող մարդկանց, որոնք մասնակցում էին ցուցարարներին բերման ենթարկելուն: Ընդդիմությունը կասկածում էր, որ դիմակավորված այդ մարդիկ խոշոր գործարարների թիկնապահներն են՝ ուղարկված ոստիկանությանն օգնելու:

Իսկ 2026 թվականի ապրիլին նախկին հանրապետականն արդեն Նիկոլ Փաշինյանի հետ աշխատանքային նախաճաշի հրավիրված գործարարների թվում էր: Նույն այն Փաշինյանի, որը դեռ ընդդիմադիր գործիչ եղած տարիներին հրապարակավ նրանից բացատրություն էր պահանջում SAS-ի աշխատակիցների նկատմամբ ենթադրյալ ճնշումների համար:

«Փողը հոտ չունի»,— ասում էր Հռոմի կայսր Վեսպասիանոսը՝ արդարացնելով հանրային զուգարանների համար սահմանած հարկը: Գրեթե երկու հազար տարի անց էլ այս խոսքը չի կորցրել արդիականությունը: Հատկապես այնտեղ, որտեղ քաղաքական հակառակորդները նստում են նույն սեղանի շուրջ, երբեմնի մեղադրանքներն այլևս նախկին սրությունը չունեն, իսկ խոշոր բիզնեսը շարունակում է լեզու գտնել իշխանության հետ՝ անկախ նրա քաղաքական գույնից:

Հակակոռուպցիոն ազգային նախաձեռնության (ՀԱՆ) այս հետաքննությունը Արտակ Սարգսյանի, նրա գործարար կայսրության, ընտանեկան ունեցվածքի, քաղաքական կապերի և այն քրեական գործերի մասին է, որոնցում հիշատակվել են նրա կամ նրա ընկերությունների անունները: Բայց առաջին հերթին սա Հայաստանում խոշոր բիզնեսի ու իշխանության հարաբերությունների պատմությունն է: Այն նախկին իշխանության, որին խոստանում էին փոխարինել, և այն հեղափոխական իշխանության, որը խոստանում էր փոխել խաղի կանոնները:

ՍԱՍ-ի Արտակ. կոշիկի բիզնեսից մինչև պատգամավորական մանդատ

Կենսագրության բացերը

Արտակ Սամվելի Սարգսյանը ծնվել է 1973 թվականի հուլիսի 13-ին Երևանում: Սակայն Ազգային ժողովի ներկայացրած նրա պաշտոնական կենսագրությունը կյանքի առաջին 24 տարիների մասին գրեթե ոչինչ չի ասում: Ծննդյան ամսաթվին անմիջապես հաջորդում է 1997 թվականը, երբ, ըստ նույն կենսագրության, նա հիմնադրել է SAS Group հոլդինգը և մինչև 2012 թվականը եղել դրա նախագահը:

2001 թվականին Սարգսյանն ավարտել է Հայկական պետական գյուղատնտեսական ակադեմիան՝ «Ագրարային արտադրության տնտեսագիտություն և կառավարում»

մասնագիտությամբ: Այսինքն՝ ապագա պատգամավորը բարձրագույն կրթության դիպլոմ է ստացել այն ժամանակ, երբ արդեն սեփական բիզնեսն ուներ:

2014 թվականի մարտին «Ժողովուրդ» օրաթերթը հիշեցնում էր, որ Սարգսյանի ճանապարհը դեպի խոշոր բիզնես սկսվել է կոշիկ կարելուց: Ուշագրավ է, որ դեռ 2009 թվականին նրա եղբայրը՝ SAS Group-ի համասեփականատեր Արամ Սարգսյանը, Panorama.am-ին տված հարցազրույցում պատմել էր նույնը. ընտանեկան բիզնեսը սկսել են կոշիկի արտադրությունից, հետո անցել Իտալիայից կոշիկի ներմուծմանը, իսկ 1997 թվականին Երևանում բացել առաջին շուրջօրյա SAS սուպերմարկետը:

Այդուհանդերձ, պաշտոնական կենսագրության հիմնական բացը մնում է չլրացված. ինչո՞վ է զբաղվել Արտակ Սարգսյանը մինչև 1997 թվականը, ինչպե՞ս է գոյացել սկզբնական կապիտալը, և ի՞նչ դեր են ունեցել եղբայրն ու գործընկերները բիզնեսի կայացման գործում:

«Վալենտինա» խանութից մինչև առաջին սուպերմարկետները

Իսկ ընտանեկան բիզնեսի պատմությունը, ըստ ընկերության հրապարակումների, սկսվել է ավելի վաղ, քան նշված է Արտակ Սարգսյանի պաշտոնական կենսագրության մեջ: SAS Group-ի ժամանակագրության համաձայն՝ դեռ 1995 թվականին Երևանում բացվել է «Վալենտինա» խանութը: Ընկերության էջերում Սարգսյանը ներկայացվել է որպես հիմնադիր և նախագահ 1996 թվականից, մինչդեռ խորհրդարանական կենսագրության մեջ SAS-ի հիմնադրման տարեթիվը 1997-ն է:

Հենց 1997 թվականին էլ Մաշտոցի պողոտա 18 հասցեում բացվել է առաջին շուրջօրյա SAS սուպերմարկետը: Սակայն բիզնեսի հիմնական իրավաբանական անձը՝ «ՍԱՍ-Գրուպ» ՍՊԸ-ն, 1998 թվականի փետրվարին հիմնադրել է Արտակի ավագ եղբայրը՝ Արամ Սարգսյանը: Նույն տարում ստեղծվել է նաև հրուշակեղենի SAS Sweet ապրանքանիշը: Երկրորդ սուպերմարկետը բացվել է 2002 թվականին, իսկ 2003-ին ընտանեկան խանութների շարքը համալրվել է «Պալերմո» կոշիկի սրահով:



Լուսանկարում՝ Արտակ և Արամ Սարգսյանները

Աղբյուրներ. SAS Group. ընկերության պատմությունը, ՀՀ Ազգային ժողով. Արտակ Սարգսյանի կենսագրությունը, ՀՀ պետական ռեգիստր. «ՍԱՍ-Գրուպ» ՍՊԸ:

«Օրինաց երկիր». մուտք քաղաքականություն և աղմկահարույց հեռացում

Ընտանեկան բիզնեսի ընդլայնմանը զուգահեռ Արտակ Սարգսյանը սկսեց նաև քաղաքականության մեջ տեղ զբաղեցնել: 2004 թվականին նա անդամագրվեց Արթուր Բաղդասարյանի գլխավորած «Օրինաց երկիր» կուսակցությանը, որն այն ժամանակ իշխող կոալիցիայի կազմում էր:

2004 թվականի օգոստոսի 26-ին «Առավոտը» գրում էր, որ SAS Group-ի սեփականատերն ընդամենը երեք օր առաջ էր անդամակցել «Օրինաց երկիր» կուսակցությանը՝ թիվ 44 ընտրատարածքում նշանակված լրացուցիչ ընտրությունների նախաշեմին: Պատգամավորական տեղը թափուր էր մնացել այն բանից հետո, երբ այդ ընտրատարածքից ընտրված Արամ Հարությունյանը նշանակվել էր քաղաքաշինության նախարար:

Ուշագրավ է, որ քաղաքական նորեկի թեկնածությունը սատարում էր նաև Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ): Այդ մասին դեռ օգոստոսի 23-ին հայտարարել էր այն ժամանակվա վարչապետ, ՀՀԿ խորհրդի նախագահ Անդրանիկ Մարգարյանը:

Սակայն նախընտրական պայքարն ուղեկցվում էր սկանդալներով: «Առավոտը», հղում անելով սեփական աղբյուրներին, պնդում էր, որ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ինը

անդամներից յոթը Սարգսյանի մարդիկ են: Նրա հիմնական մրցակից Արայիկ Հայրապետյանն էլ նրան մեղադրում էր նախընտրական պայքարում անօրինական միջոցների դիմելու մեջ:

Առաջին քվեարկությունից հետո՝ 2004 թվականի սեպտեմբերի 19-ին, անցկացվեց վերաքվեարկություն: Սարգսյանը ստացավ 13 970 ձայն և պատգամավորական մանդատ: Նրա մրցակցի կողմնակիցները հայտարարում էին զանգվածային խախտումների մասին: Այսպիսով՝ գործարարի՝ խորհրդարան մտնելու առաջին իսկ փորձն ուղեկցվեց լուրջ մեղադրանքներով, որոնք, այդուհանդերձ, մնում էին ընտրապայքարի մասնակիցների հայտարարությունների մակարդակում:

2004–2006 թվականներին Սարգսյանն «Օրինաց երկիր» խմբակցության անդամ էր: Սակայն 2006 թվականի ապրիլի 13-ին կուսակցության քաղաքական խորհուրդը միաձայն որոշեց նրան հեռացնել կուսակցության շարքերից: Պատճառն այն էր, որ Սարգսյանը կողմ էր քվեարկել պետական գույքի մասնավորեցման 2001–2003 թվականների ծրագրի կատարման մասին կառավարության հաշվետվությանը՝ հակառակ խմբակցության՝ դեմ քվեարկելու որոշմանը:

Հաջորդ օրը ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանը հայտարարեց, որ Արտակ Սարգսյանի հեռացման մեջ որևէ սենսացիա չի տեսնում:

Այս ամենը տեղի էր ունենում նախագահ Ռոբերտ Քոչարյանի և Ազգային ժողովի նախագահ Արթուր Բաղդասարյանի հարաբերությունների սրման շրջանում: Մայիսին «Օրինաց երկիրը» դուրս եկավ իշխող կոալիցիայից, իսկ Բաղդասարյանը հրաժարվեց ԱԺ նախագահի պաշտոնից:

Իսկ Սարգսյանն այլ ճանապարհ ընտրեց: 2006 թվականի մայիսի 22-ին նա դուրս եկավ «Օրինաց երկիր» խմբակցությունից, իսկ մայիսի 25-ին միացավ «Գործարար» պատգամավորական խմբին:

Նույն մայիսին մեկ այլ կարևոր իրադարձություն էլ տեղի ունեցավ՝ այս անգամ ընտանեկան բիզնեսում: Արտակ Սարգսյանը պաշտոնապես դարձավ «ՍԱՍ-Գրուպ» ՍՊԸ-ի համասեփականատեր: Գրանցման փաստաթղթերի համաձայն՝ այդ պահից Արտակ և Արամ Սարգսյան եղբայրներից յուրաքանչյուրին պատկանում էր ընկերության 50 տոկոսը: Այդ ժամանակ Արտակն արդեն գրեթե երկու տարի պատգամավոր էր:

2006 թվականի հուլիսի 31-ին Սարգսյանն անդամագրվեց ՀՀԿ-ին: Փաստորեն, գործարարը միացավ այն կուսակցությանը, որը դեռ երկու տարի առաջ սատարել էր նրա թեկնածությունը պատգամավոր դառնալու առաջին փորձի ժամանակ:

Երեք կուսակցություն և հինգ տարի առանց մանդատի

Սակայն ՀՀԿ-ին անդամակցելը Արտակ Սարգսյանի համար տեղ չապահովեց հաջորդ գումարման խորհրդարանում: 2007 թվականի ընտրությունների ժամանակ նա անսպասելիորեն հայտնվեց Տիգրան Կարապետյանի Ժողովրդական կուսակցության համամասնական ցուցակի չորրորդ տեղում:

2007 թվականի փետրվարի 27-ին «Առավոտը» գրում էր, որ Ժողովրդական կուսակցության ցուցակը փրկօղակ է դարձել «Օրինաց երկրի» նախկին անդամների համար, որոնց տեղ չէր հասել իշխանամետ մյուս կուսակցությունների ցուցակներում:

Ինքը՝ Տիգրան Կարապետյանը, SAS-ի սեփականատիրոջ հայտնվելն իր կուսակցության ցուցակում բացատրում էր անձնական կապերով.

«ՍԱՍ-ի սեփականատեր Արտակն ընկերոջս տղան է, նույն շենքում ենք ապրել: Երբ Արտակն առաջադրեց իր թեկնածությունը, մենք աջակցեցինք նրան»:

Սակայն Ժողովրդական կուսակցությունը չհաղթահարեց անցողիկ շեմը: Սարգսյանը հաջորդ հինգ տարիներին մնաց առանց պատգամավորական մանդատի:

Քաղաքական անհաջողությունը, սակայն, ամենևին չխանգարեց ընտանեկան բիզնեսի ընդլայնմանը: 2007 թվականին բացվեց երրորդ SAS սուպերմարկետը, իսկ 2008-ին՝ ևս երկուսը: Նույն տարվա հունվարին Սևծովյան առևտրի և զարգացման բանկը ընկերությանը տրամադրեց 7,6 միլիոն դոլարի վարկ՝ Երևանում սուպերմարկետների ցանցն ընդլայնելու համար: Բանկի փաստաթղթերում SAS Group-ը ներկայացվում էր որպես Սարգսյան եղբայրներին պատկանող ընկերություն:

SAS-ը դուրս է գալիս Հայաստանի սահմաններից

Մինչ Արտակ Սարգսյանը պատգամավորական մանդատ չուներ, ընտանեկան բիզնեսը շարունակում էր ընդլայնվել: 2009 թվականին բացվեցին վեցերորդ SAS սուպերմարկետը և տան պարագաների SAS Home խանութը: Նույն տարվա հուլիսին Արտակ և Արամ Սարգսյան եղբայրները Կալիֆորնիայի Գլենդել քաղաքում գրանցեցին SAS USA LLC ընկերությունը՝ հավասար բաժնեմասերով: Այդ շրջանում Թբիլիսիում սկսեցին գործել նաև միջազգային բրենդների խանութներ:

2010 թվականին բացվեց ցանցի յոթերորդ սուպերմարկետը, իսկ Սևծովյան առևտրի և զարգացման բանկը SAS Group-ին տրամադրեց ևս 3 միլիոն դոլար՝ Վրաստանում Next խանութների զարգացման համար: Ըստ «Հետքի» հետաքննության՝ Վրաստանի ռեգիստրում տարբեր տարիներին գրանցվել է Արտակ Սարգսյանի և նրա շրջապատի հետ կապված ինը ընկերություն: Դրանցից մեկը՝ Land Lord-ը, պատկանում էր հենց Արտակին և կառավարում էր Next խանութները:

2011 թվականին SAS-ը գործարկեց sas.am առցանց սուպերմարկետը: Դրան զուգահեռ ընտանեկան բիզնեսն ընդլայնվում էր նաև հագուստի ու կոշիկի առևտրի ոլորտում՝ Next, Debenhams, Aldo և Baldi ապրանքանիշերով:

Այսպիսով՝ ընդամենը մի քանի տարում երևանյան սուպերմարկետների ցանցը վերածվեց Հայաստանի սահմաններից դուրս գործող բիզնեսի՝ արտերկրում գրանցված

ընկերություններով, միջազգային բրենդներով և բազմամիլիոն վարկերով: Առանձնակի ուշադրության է արժանի այն, թե հետագայում ինչպես են վերագրանցվել այս ակտիվները:

Աղբյուրներ. «Հետք», 05.08.2016. բիզնեսը Վրաստանում և օֆշորները, Սևծովյան առևտրի և զարգացման բանկ, 01.09.2010. Next-ի ֆինանսավորումը Վրաստանում, Վրաստանի պետական ռեգիստր. ընկերությունների գրանցման տվյալները:

SAS-ի օֆշորային լաբիրինթոսը. Կիպրոս, Վիրջինյան կղզիներ և 100 լարիանոց գործարքներ

Արտերկրում SAS-ի գործունեության ընդլայնումն ուղեկցվում էր ոչ միայն նոր խանութների բացմամբ, այլև տարբեր երկրներում ու տարածքներում ընկերությունների ցանցի ստեղծմամբ: 2011 թվականի մարտին Կիպրոսում գրանցվեց SDA Trade Chain Group Limited ընկերությունը՝ ընդամենը 2 հազար եվրո կանոնադրական կապիտալով: «Հետքի» ուսումնասիրած փաստաթղթերի համաձայն՝ ընկերության վերջնական սեփականատերերն Արտակ և Արամ Սարգսյան եղբայրներն էին՝ յուրաքանչյուրը 50 տոկոս բաժնեմասով: Բանկային հաշիվ բացելիս ընկերությունը նշել էր, որ պատկանում է SAS խմբին, իսկ հաշվով ակնկալվող դրամական շրջանառությունը 5 միլիոն դոլար է:

Արդեն 2011 թվականի ապրիլին կիպրական ընկերության սեփականատերը դարձավ Բրիտանական Վիրջինյան կղզիներում գրանցված SADA Holding and Investment Inc.-ը: Վերջնական շահառուները, սակայն, մնացին նույն Սարգսյան եղբայրները: Այսպիսով՝ նրանց և կիպրական ընկերության միջև հայտնվեց ևս մեկ օֆշորային օղակ:

Նույն տարում սկսեց ձևավորվել նաև Baldi կոշիկի ապրանքանիշի արտասահմանյան ընկերությունների ցանցը: 2011 թվականի սեպտեմբերին Լոնդոնում գրանցվեց Baldi Retail Ltd-ն, որի ղեկավար դարձավ Արտակ Սարգսյանի զոքանչը՝ Եվգենյա Թումասովան: Բրիտանական ընկերությունը պատկանում էր Վիրջինյան կղզիներում գրանցված համանուն ընկերությանը: 2012 թվականի հուլիսին Կիպրոսում գրանցվեց Baldi Cyprus Holding Limited-ը, որին հետագայում փոխանցվում էին այդ ապրանքանիշի հետ կապված՝ Հայաստանում և արտերկրում գործող ընկերությունները:

Պակաս ուշագրավ չէին Վրաստանում տեղի ունեցող փոփոխությունները: 2011 թվականին Deben ընկերությունը նախ անցավ Արամ Սարգսյանին, ապա ընդամենը 200 լարիով վաճառվեց Վիրջինյան կղզիներում գրանցված Debinvest-ին: 2013 թվականին բրիտանական մի ընկերություն 100 լարիով ձեռք բերեց վրացական Adelson Georgia-ն, որն էլ 2014 թվականին անցավ Debinvest-ի վերահսկողության տակ:

«Հետքը» նշում էր, որ այս ընկերությունների գրանցված սեփականատերերի և ներկայացուցիչների թվում կային SAS-ի ֆինանսական կառավարման հետ կապ ունեցող անձինք:

Նման չնչին գումարներով գործարքներն անխուսափելիորեն հարց են առաջացնում՝ ո՞րն էր այս վերագրանցումների տնտեսական իմաստը:

Զուգահեռաբար փոխվում էր նաև Հայաստանում Baldi-ի գործունեության կազմակերպումը: Սկզբում այստեղ գործում էր «Բելինի» ընկերությունը, իսկ 2013 թվականի ապրիլին Եվգենյա Թումասովան հիմնադրեց «Բալդի» ՓԲԸ-ն: Հետագայում ընկերության բաժնետոմսերը փոխանցվեցին կիպրական հոլդինգին, ապա՝ պատգամավորի եղբորը՝ Արամ Սարգսյանին:

Baldi-ի միջազգային ցանցն ընդգրկում էր նաև Վրաստանը, Ղազախստանը, Ուկրաինան, Ռուսաստանն ու ԱՄՆ-ն: Գնորդին ծանոթ ապրանքանիշի հետևում իրավաբանական անձանց ճյուղավորված ցանց էր, որի ընկերությունների սեփականատերերի և կառավարողների թվում էին Սարգսյանի հարազատներն ու ընտանիքի հետ կապ ունեցող ընկերությունները:

Այսպիսով՝ արտերկրում ընտանեկան բիզնեսի ընդլայնման հիմքում տարբեր երկրներում գրանցված ընկերությունների բարդ ցանց էր: Առանձին ընկերությունների բաժնեմասերն անցնում էին ազգականներից օֆշորային սեփականատերերին և հակառակը՝ երբեմն խորհրդանշական գումարներով: Ի՞նչ տնտեսական նպատակ էին հետապնդում այս վերագրանցումները:

Աղբյուրներ. «Հետք», 05.08.2016. Deben և Adelson Georgia ընկերությունները, «Հետք», 29.04.2022. «Պանդորայի փաստաթղթերը» և Baldi-ն, ՀՀ պետական ռեգիստր. ընկերության գրանցման տվյալները:

Բարեգործություն՝ ընտրական աշխարհագրությամբ

Մինչ ընտանեկան բիզնեսը համալրվում էր արտասահմանյան ընկերություններով, Արտակ Սարգսյանի քաղաքական հավակնությունները ոչ պակաս ուշագրավ զարգացումներ էին խոստանում:

2011 թվականի հունիսի 30-ին NEWS.am-ը, հղում անելով «Չորրորդ ինքնիշխանություն» թերթին, հայտնում էր, որ գործարարը մտադիր է վերադառնալ խորհրդարան: Ըստ հրապարակման՝ մտերիմների շրջապատում նա ասել էր. «Ինչքան պետք է, փող կտամ»:

Նույն՝ 2011 թվականին SAS Group-ը ստեղծեց Արտակ Սարգսյանի անվան բարեգործական հիմնադրամը, որի հոգաբարձուների խորհուրդը 2011–2012 թվականներին գլխավորում էր ինքը՝ Սարգսյանը:

Առանձնակի ուշադրության է արժանի հիմնադրամի գործունեության աշխարհագրությունը: Դատելով պահպանված արխիվից՝ բարեգործական ծրագրերն իրականացվում էին հիմնականում Երևանի Արաբկիր վարչական շրջանում, որտեղ Սարգսյանը պատրաստվում էր առաջադրվել 2012 թվականի խորհրդարանական ընտրություններում:

2011 թվականին հիմնադրամը կազմակերպում էր ծառատունկ, բակերի բարեկարգման աշխատանքներ և այլ միջոցառումներ: 2012 թվականի սկզբին շարունակվում էին սոցիալական

ու կրթական ծրագրերը, բնակիչներին տրամադրվող օգնությունը: Ընտրություններից հետո՝ 2012 թվականի սեպտեմբերին, հիմնադրամը հայտնեց, որ դպրոցական պարագաներ է հանձնել Արաբկիրի ավելի քան 500 երեխայի:

Սակայն հիմնադրամի արխիվում հայտնաբերված վերջին հրապարակումը թվագրված է 2012 թվականի սեպտեմբերով: Հետագա գործունեության մասին տեղեկություններ չկան:

Ուշագրավ է, որ հիմնադրամի բարեգործական ակտիվությունը համընկել էր խորհրդարանական ընտրությունների նախապատրաստական շրջանի հետ և ծավալվում էր հիմնականում մեկ ընտրատարածքում: Սա հիմք է տալիս ենթադրելու, որ բարեգործությունը, սոցիալական խնդիրներ լուծելուց բացի, նպաստում էր նաև ընտրողների շրջանում գործարարի դիրքերի ամրապնդմանը:

Միլիոններ՝ հաշիվներին, ութ ընկերություն և վերադարձ խորհրդարան

2012 թվականի ընտրություններին Արտակ Սարգսյանն արդեն մասնակցում էր որպես խոշոր գործարար:

ԿԸՀ ներկայացրած հայտարարագրի համաձայն՝ 2012 թվականի մարտի 1-ի դրությամբ նրա բանկային հաշիվներին կար 645,6 միլիոն դրամ և շուրջ 25 հազար դոլար:

Հայտարարագրում նշված էին ութ առևտրային ընկերություններում ունեցած բաժնեմասերը՝ «Land Lord», «Landfro» և «SAS-Group» ՍՊԸ-ներում, «Gortenza», «Mirna», «SAS Holding» և «Ritos» ՓԲԸ-ներում, ինչպես նաև «SAS USA» ՍՊԸ-ում: Առաջին ընկերությունն ամբողջությամբ պատկանում էր Սարգսյանին, իսկ մյուս յոթում նա ուներ 50-ական տոկոս բաժնեմաս:

Սակայն խորհրդարան վերադառնալուց հետո արտասահմանյան ընկերությունների մասին տեղեկություններն անհետացան Սարգսյանի հայտարարագրերից: Ըստ «Հետքի» հետաքննության՝ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով ներկայացրած հայտարարագրերում նա նշում էր միայն հայկական ընկերությունները: Ամերիկյան SAS USA-ն և վրացական Land Lord-ը, որոնք ներառված էին 2012 թվականի նախընտրական հայտարարագրում, հետագա փաստաթղթերում այլևս չկային: Ինչո՞ւ էին մինչև ընտրությունները հայտարարագրված արտասահմանյան ընկերությունները պատգամավորական մանդատը ստանալուց հետո դուրս մնացել հայտարարագրերից: Այս հարցը հետագայում դեռ բազմիցս էր ծագելու:

Ընդ որում՝ Սարգսյանի հայտարարագրած ամսական եկամուտն ընդամենը 366 հազար դրամ էր՝ 201 հազար դրամ աշխատավարձ SAS Holding-ից և 165 հազար դրամ՝ Ritos-ից:

2012 թվականի խորհրդարանական ընտրություններում ՀՀԿ-ն խաղադրույք էր կատարել խոշոր բիզնեսի ներկայացուցիչների վրա: Ինչպես մարտի 15-ին նշում էր «Ազատություն» ռադիոկայանը, մեծամասնական ընտրատարածքներում կուսակցության առաջադրած թեկնածուների ճնշող

մեծամասնությունը գործարարներ էին: Նրանց թվում էր նաև SAS Group-ի սեփականատեր Արտակ Սարգսյանը:

2012 թվականի մայիսի 4-ին 1in.am-ն ուշադրություն հրավիրեց մի ուշագրավ հանգամանքի վրա. միայն 2011 թվականին «Landfro» ՍՊԸ-ն վճարել էր 235,6 միլիոն դրամի հարկ, իսկ «SAS-Group»-ը՝ 202,9 միլիոն: Սակայն այդ ընկերությունների շահույթից ստացված եկամուտներ նրանց համասեփականատիրոջ հայտարարագրում նշված չէին:

Պարբերականը նույնիսկ ենթադրել էր, թե ընկերությունները վնասով են աշխատել: Այդուհանդերձ, հայտարարագրում շահաբաժինների բացակայությունն ինքնին չի ապացուցում, որ բիզնեսը վնասաբեր է: Բայց ուշագրավ է մնում անհամապատասխանությունը գործարարի գործունեության ծավալների, բանկային հաշիվներին առկա հարյուրավոր միլիոն դրամների և պաշտոնապես հայտարարագրված համեմատաբար համեստ եկամտի միջև:

2012 թվականի մայիսի 6-ին Արտակ Սարգսյանը կրկին պատգամավոր դարձավ՝ ՀՀԿ-ի թեկնածուի կարգավիճակով՝ հաղթելով թիվ 4 ընտրատարածքում:

Այսպես ավարտվեց նրա պատգամավորական գործունեության հնգամյա ընդմիջումը: Ութ տարվա ընթացքում Սարգսյանը հասցրել էր անցնել «Օրինաց երկրով», «Գործարար» պատգամավորական խմբով, ՀՀԿ-ով և Ժողովրդական կուսակցության ընտրական ցուցակով, կորցնել մանդատն ու այն վերականգնել արդեն իշխող կուսակցության աջակցությամբ:

Քաղաքական հանգրվանները փոխվում էին: Բիզնեսն աճում էր: Իսկ խորհրդարան վերադառնալու ձգտումը մնում էր անփոփոխ:

Աղբյուրներ. 1in.am, 04.05.2012. հայտարարագիրը, «Հետք», 05.08.2016. արտասահմանյան ընկերություններն ու հայտարարագրերը, «Ազատություն» ռադիոկայան, 15.03.2012, ՀՀ Ազգային ժողով. 2012–2017 թվականների պատգամավորական կենսագրությունը:

Պետքական կապեր. «Արմենչիկից» ու «Վաչիկից» մինչև Սասուն Միքայելյան

Եթե խորհրդարանում Արտակ Սարգսյանն առանձնապես ակտիվ չէր, ապա իշխանական միջանցքներում, դատելով մամուլի հրապարակումներից, շատ ավելի լավ էր կողմնորոշվում:

2012 թվականի սեպտեմբերի 8-ին «Հետքը» հետաքննություն հրապարակեց Պետական եկամուտների կոմիտեի նախագահի նախկին տեղակալ Արտաշես Բեյբությանի մասին: Պարբերականը պնդում էր, որ Բեյբությանը SAS Group-ի բաժնետերերից է և, ենթադրաբար, աջակցել է ցանցի հսկիչ դրամարկղային մեքենաներում հատուկ սարքերի տեղադրմանը, որոնք հնարավորություն էին տալիս հասույթը ցույց տալ ցանկալի չափով:

Կառավարությունում «Հետքի» աղբյուրի տեղեկություններով՝ որոշ խոշոր առևտրային ցանցեր ցույց էին տալիս իրական շրջանառության ընդամենը մոտ 30 տոկոսը՝ մնացած 70 տոկոսը թողնելով ստվերում: Պարբերականն այս գործելակերպը կապում էր Բեյբությանի հովանավորության հետ: Բեյբությանն իր հերթին սերտ հարաբերություններ ուներ նախագահի թիկնազորի ղեկավար Վաչագան Ղազարյանի հետ:

2012 թվականի սեպտեմբերի 11-ին Արտակ Սարգսյանը կտրականապես հերքեց SAS Group-ի հետ Բեյբությանի առնչության մասին տեղեկությունները: «Հետքի» հետ զրույցում նա դրանք անվանեց «անհեթեթ ասեկոսեներ» և լրագրողին հարցրեց. «Դու ինքդ հավատո՞ւմ ես քո ասածին»: Այնուհետև հրաժարվեց պատասխանել մյուս հարցերին:

2014 թվականի մարտին «Ժողովուրդ» օրաթերթը կրկին անդրադարձավ SAS-ի սեփականատիրոջ ազդեցիկ կապերին: Թերթը գրում էր, որ Ռոբերտ Քոչարյանի նախագահության տարիներին Արտակ Սարգսյանն ու նրա եղբայր Արամը ջերմ հարաբերություններ են ունեցել «Արմենչիկ» անունով հայտնի ազդեցիկ պաշտոնյա Արմեն Գևորգյանի հետ: Սակայն հետագայում, գնահատելով Սերժ Սարգսյանի նախկին վարորդ, ապա նրա թիկնազորի ղեկավար դարձած Վաչագան Ղազարյանի՝ «Վաչիկի» ազդեցությունը, եղբայրները սկսել էին հենվել նրա վրա: Թերթը հենց Գևորգյանին ու Ղազարյանին էր ներկայացնում որպես SAS-ի բիզնեսի հովանավորներ:



Լուսանկարում՝ Վաչագան Ղազարյանը

Սակայն նույն հրապարակման մեջ հիշատակվում էր ևս մեկ անուն՝ այս անգամ արդեն ընտանիքի անձնական կապերի, այլ ոչ թե բիզնեսի ենթադրյալ հովանավորության առնչությամբ:

«Ժողովուրդ» օրաթերթի՝ 2014 թվականի մարտի 17-ի հրապարակման համաձայն՝ Արտակ Սարգսյանի երկու երեխաների կնքահայրը Սասուն Միքայելյանն է, որը հետագայում դարձավ Նիկոլ Փաշինյանի քաղաքական զինակիցներից մեկը: Թերթը միաժամանակ մեղադրում էր Սարգսյան եղբայրներին այն բանի համար, որ 2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունների առնչությամբ Միքայելյանի կալանավորումից հետո նրանք, իբր, ոչ մի անգամ չեն այցելել նրա ընտանիքին և անգամ չեն զանգահարել՝ իրենց քավորի որպիսությունն իմանալու:

Աղբյուրներ. «Հետք», 08.09.2012. Բեյբությանի մասին հետաքննությունը, «Հետք», 11.09.2012. Սարգսյանի հերքումը, «Ժողովուրդ», 17.03.2014. Սարգսյանի կապերը:

Պատգամավորն ու չաշխատող խոսափողը

Արտակ Սարգսյանը համառորեն ձգտում էր խորհրդարան մտնել, կորցնում էր մանդատը, փոխում կուսակցություններն ու կրկին ընտրվում: Բայց հանուն ինչի՞: Դատելով նրա պատգամավորական գործունեությունից՝ ամենևին էլ ոչ ամբիոնից ելույթ ունենալու:

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի՝ հինգերորդ գումարման Ազգային ժողովի աշխատանքի հինգ տարիներին՝ 2012–2017 թվականներին, Սարգսյանը բացակայել էր ընդամենը 36 նիստից, 844 անգամ քվեարկել «կողմ», ինը անգամ՝ «դեմ», մեկ անգամ՝ «ձեռնպահ», իսկ 75 անգամ չէր մասնակցել քվեարկությանը: Այդ ընթացքում նա ոչ մի անգամ ելույթ չէր ունեցել խորհրդարանի ամբիոնից: Պատգամավորի աշխատանքը, ըստ ամենայնի, հիմնականում սահմանափակվում էր կոճակը պարտաճանաչորեն սեղմելով:

Այդուհանդերձ, 2017 թվականի փետրվարի 6-ին գրեթե պատմական իրադարձություն տեղի ունեցավ. Սարգսյանն առաջին անգամ փորձեց տեղից ելույթ ունենալ՝ պատասխանելու SAS-ի աշխատակիցներին ընտրական գործընթացում ապօրինի ներգրավելու մեղադրանքներին: Բայց անսպասելի խոչընդոտ առաջացավ. խոսափողը չէր աշխատում: Իսկ մարտի 1-ին «Ժողովուրդը» հայտնեց, որ նիստի ընթացքում դահլիճ են հրավիրել տեխնիկական մասնագետի՝ պատգամավորի խոսափողը նորոգելու համար: Թերթը հեգնում էր՝ դժվար թե մինչև գումարման ավարտը Սարգսյանըևս մեկ անգամ ցանկանա խոսել, այնպես որ խոսափողին մնում է միայն լուսանկարները զարդարել:

2017 թվականի ապրիլի 25-ին Հայ ազգային կոնգրեսի փոխնախագահ Լևոն Զուրաբյանը, ելույթ ունենալով Սահմանադրական դատարանում, նույնպես հիշեցրեց, որ ամբողջ գումարման ընթացքում Արտակ Սարգսյանը խորհրդարանի նիստերին ոչ մի բառ չի արտասանել: Նրա բնորոշմամբ՝ նման պատգամավորները պահում են «լռության ուխտը», բայց միաժամանակ հաջողացնում են վերընտրվել:

Եվ, այնուամենայնիվ, 2017 թվականի մայիսին Սարգսյանն արդեն վեցերորդ գումարման Ազգային ժողովի եվրոպական ինտեգրման հարցերի հանձնաժողովի կազմում էր: «Ժողովուրդն» այն ժամանակ կասկած էր հայտնել՝ արդյոք SAS-ի սեփականատերը կկարողանա՞ թեկուզ երկու

նախադասությամբ բացատրել, թե ինչ տարբերություն կա եվրաինտեգրման և ԵԱՏՄ-ին անդամակցության միջև:

Ուրեմն ինչո՞ւ էր Արտակ Սարգսյանին այդքան անհրաժեշտ պատգամավորական մանդատը, եթե հինգ տարվա ընթացքում նա այդպես էլ ոչ մի անգամ չբարձրացավ խորհրդարանի ամբիոն: Հարցն առավել ուշագրավ է, եթե հաշվի առնենք, թե քաղաքական որքան ջանք էր նա գործադրել այդ մանդատը ստանալու և պահպանելու համար:

Աղբյուրներ. «Ժողովուրդ», 01.03.2017. Սարգսյանի խոսափողը, «Ժողովուրդ», 28.03.2017. խորհրդարանական վիճակագրությունը, Armlur.am, 25.04.2017. Լևոն Զուրաբյանի հայտարարությունը, «Ժողովուրդ», 27.05.2017. եվրաինտեգրումը, ՀՀ Ազգային ժողով. եվրոպական ինտեգրման հարցերի հանձնաժողովի կազմը:

Ձայներ՝ ՍԱՍ-ի Արտակի համար. սկանդալ, որը վերապրեց նաև հեղափոխությունը

Եթե ինքը՝ Արտակ Սարգսյանը, հինգ տարվա ընթացքում այդպես էլ չխոսեց խորհրդարանի ամբիոնից, ապա այդ նույն ամբիոնից նրա հասցեին մեղադրանքներ հնչեցին:

Դեռ 2017 թվականի փետրվարի 6-ին Հայաստանի ապագա վարչապետ Նիկոլ Փաշինյանն Ազգային ժողովի ամբիոնից բացատրություն պահանջեց Արտակ Սարգսյանից: Փաշինյանի խոսքով՝ ինքը բազմաթիվ բողոքներ էր ստացել այն մասին, որ SAS-ի սեփականատերը ցանցի աշխատակիցներին ստիպում է փոխել հաշվառման հասցեն, որպեսզի նրանք կարողանան իր օգտին քվեարկել այն ընտրատարածքում, որտեղ ինքն առաջադրվել էր:

Սարգսյանը հերքեց մեղադրանքները՝ դրանք սուտ որակելով:

Սակայն ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրություններից հետո նոր սկանդալ բռնկվեց: Ապրիլի 13-ին համացանցում հայտնվեց «ՍԱՍ Գրուպի» աշխատակիցների նախընտրական ժողովի մոտ 40 րոպե տևողությամբ ձայնագրությունը: Մի տղամարդ աշխատակիցներից պահանջում էր ձայներ հավաքել Արտակ Սարգսյանի օգտին, նվաստացնում էր առաջադրանքը չկատարողներին, սպառնում աշխատանքից ազատել և խրախուսանքներ խոստանում աչքի ընկածներին:

2017 թվականի ապրիլի 19-ին Հատուկ քննչական ծառայությունը քրեական գործ հարուցեց ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 2-րդ մասով, որը պատասխանատվություն էր նախատեսում ընտրողների նկատմամբ հարկադրանքի որոշ դրսևորումների համար:

Շուտով լրագրողները սկսեցին նաև անուններ տալ:

Ըստ «Հետքի» տեղեկությունների՝ ժողովը վարում էր Արտակ Սարգսյանի ավագ եղբայրը՝ Արամ Սարգսյանը: Հրապարակումներում հիշատակվում էին նաև ընկերության այլ աշխատակիցներ՝ կոմերցիոն տնօրեն Էդգար Ավետիսյանը, որին ժողովը վարողը հանդիմանում էր քիչ ձայներ

հավաքելու համար, և կադրերի բաժնի պետ Մարինե Տեր-Հովհաննիսյանը: Ապրիլի 25-ին «Ժողովուրդ» օրաթերթը հայտնեց, որ երկուսն էլ ընդգրկված են եղել ՀՀԿ համամասնական ցուցակում:

Այդ ընթացքում SAS-ի առնչությամբ կրկին շրջանառվեց Արտաշես Բեյբությանի անունը: Ապրիլի 27-ին «Հրապարակ» օրաթերթն ուշադրություն հրավիրեց մի ուշագրավ հանգամանքի վրա. Բեյբությանն այդ ժամանակ ղեկավարում էր առողջապահական տեսչության Երևանի ստորաբաժանումը: Այդ կառույցի կազմում էր նաև աշխատանքի տեսչությունը:

Այսպիսով՝ SAS-ի աշխատակիցների աշխատանքային իրավունքների հնարավոր խախտումներով պետք է զբաղվեր մի գերատեսչություն, որի ստորաբաժանման ղեկավարը նախկինում «Հետքի» հրապարակման մեջ ներկայացվել էր որպես նույն ընկերության բաժնետերերից մեկը:

Ստացվում էր ուշագրավ պատկեր. պաշտոնյան, որին մամուլը կապում էր SAS-ի բիզնեսի հետ, ղեկավար պաշտոն էր զբաղեցնում այն կառույցում, որը պետք է արձագանքեր այդ ցանցի աշխատակիցների իրավունքների հնարավոր խախտումներին:

Մինչդեռ դեռ անպատասխան էր մնում հարցը, թե ով էր վարել աղմկահարույց ժողովը:

2017 թվականի մայիսի 16-ին «Ժողովուրդը» մեկ այլ անուն տվեց՝ «ՍԱՍ Գրուպի» փոխտնօրեն Սամվել Մանուկյան: Ըստ թերթի՝ նա հետագայում գլխավորել էր թիվ 4/27 տեղամասի ընտրական հանձնաժողովը:

Սակայն 2017 թվականի սեպտեմբերի 8-ին քրեական գործի վարույթը կարճվեց հանցակազմի բացակայության հիմքով:

Հատուկ քննչական ծառայությունն այդպես էլ չհայտնեց՝ հաջողվե՞լ է պարզել ժողովը վարողի ինքնությունը, և գործով կասկածյալներ կամ մեղադրյալներ եղե՞լ են:

«Հետքի» գլխավոր խմբագիր Էդիկ Բաղդասարյանը հայտարարեց, որ քննիչներն անգամ չեն դիմել խմբագրությանը՝ պարզելու, թե ինչի վրա են հիմնված Սարգսյանի եղբոր մասնակցության մասին տեղեկությունները:

Այսպիսով՝ կար հրապարակված ձայնագրություն, կային ժողովի բազմաթիվ մասնակիցներ, լրագրողները նշել էին անուններ ու պաշտոններ: Բայց գործի վարույթը կարճվեց, իսկ հանրությանն այդպես էլ չպարզաբանվեց, թե ով էր վարել ժողովը և ինչու հնչած սպառնալիքները հանցակազմ չէին պարունակում:

Եվ այստեղ հարցն արդեն ուղղվում է Նիկոլ Փաշինյանին: 2017 թվականի փետրվարին նա անձամբ էր Արտակ Սարգսյանից բացատրություն պահանջում SAS-ի աշխատակիցների նկատմամբ ենթադրյալ ճնշումների առնչությամբ: Ինչո՞ւ Փաշինյանի՝ իշխանության գալուց հետո

այս պատմությունը, որի նոր մանրամասները բացահայտվել էին աղմկահարույց ձայնագրությամբ, այդպես էլ հրապարակային շարունակություն չունեցավ:

Աղբյուրներ. «Արմենպրես», 06.02.2017. Փաշինյանի հայտարարությունը, «Ազատություն» ռադիոկայան, 19.04.2017. քրեական գործի հարուցումը, 1in.am, 25.04.2017. SAS-ի աշխատակիցները ՀՀԿ ցուցակում, NEWS.am / «Հրապարակ», 27.04.2017. Բեյբությանի մասին, Panorama.am / «Ժողովուրդ», 16.05.2017. Սամվել Մանուկյանի մասին, «Ազատություն» ռադիոկայան, 08.09.2017. քրեական գործի կարճումը, «Ազատություն» ռադիոկայան, 08.09.2017. Բաղդասարյանի և իրավապաշտպանների մեկնաբանությունները:

«Չիբիլիքս». SAS-ի տնօրենը դատապարտվեց, սեփականատերը մնաց կադրից դուրս

Սակայն աղմկահարույց ձայնագրությունը միակ պատմությունը չէր, որ SAS ցանցը կապում էր 2017 թվականի ընտրարշավների ընթացքում արձանագրված խախտումների հետ:


2017 թվականի մայիսին՝ Երևանի ավագանու ընտրությունների նախօրեին, ընդդիմադիր «Ելք» դաշինքի ներկայացուցիչները ՀՀԿ նախընտրական շտաբի մոտ գտնվող աղբամանների հարևանությամբ փաստաթղթեր հայտնաբերեցին, որոնք, ենթադրաբար, վկայում էին ընտրակաշառքի համատարած բաժանման մասին: Այդպես էլ ծնվեց «Չիբիլիքս» անվանումը՝ «զիբիլ» և WikiLeaks բառերի համադրությամբ:

Քննության նյութերի համաձայն՝ Արաբկիրում ՀՀԿ շտաբի ղեկավար Հրայր Անտոնյանն ընտրարշավի համար հատկացրել էր 100 հազար դոլար, իսկ SAS սուպերմարկետների ցանցի տնօրեն Ստեփան Սահակյանը՝ ևս 15 միլիոն դրամ: Գումարը բաժանվում էր ենթաշտաբների միջոցով. ընտրողներին առաջարկում էին 10 հազարական դրամ՝ ՀՀԿ-ի օգտին քվեարկելու դիմաց:

2017 թվականի հուլիսին քրեական գործի վարույթը կարճվեց հանցակազմի բացակայության հիմքով: Սակայն թավշյա հեղափոխությունից հետո՝ 2018 թվականի հունիսին, քննությունը վերսկսվեց:

2019 թվականի փետրվարի 4-ին դատարանը մեղավոր ճանաչեց 11 անձի: Նրանք բոլորն ընդունել էին իրենց մեղքը: Անտոնյանն ու Սահակյանը տուգանվեցին 2,5 միլիոնական դրամով, թեև դատախազը նրանցից յուրաքանչյուրի համար պահանջել էր երեք տարվա ազատազրկում:

Բայց ուշագրավն այլ բան էր. մեղադրյալների թվում չկար SAS ցանցի սեփականատեր Արտակ Սարգսյանը:



Ավելին՝ «Արմենպրես» պետական լրատվական գործակալության՝ 2018 թվականի սեպտեմբերի 14-ի անգլերեն հրապարակման մեջ Արտակ Սարգսյանի անունն ուղղակիորեն նշվում էր մեղադրյալների թվում: Հաղորդագրության մեջ պնդվում էր, որ ընտրակաշառք բաժանելու համար 15 միլիոն դրամը տրամադրել է հենց նա: Սակայն նույն հաղորդագրության հայերեն տարբերակում, որը հիմնված էր Հատուկ քննչական ծառայության նյութերի վրա, նշված էր ցանցի տնօրեն Ստեփան Սահակյանի անունը: Հետագայում դատարանի առաջ կանգնեց հենց Սահակյանը, այլ ոչ թե SAS-ի սեփականատերը:

Այսպիսով՝ նախկին իշխանության օրոք կարճված «Չիբիլիքսի» գործը հեղափոխությունից հետո, այնուամենայնիվ, հասավ դատավճռի: Սակայն Արտակ Սարգսյանն ինքը մնաց դատական գործընթացից դուրս: Եվ սա առավել ուշագրավ է, եթե հիշենք նաև մյուս պատմությունները, որոնցում շրջանառվում էր նրա անունը:

Աղբյուրներ. «Ազատություն», 04.02.2019. դատավճիռը, 168.am, 19.06.2018. գործի քննության վերսկսումը, «Արմենպրես», 14.09.2018. մեղադրանքի նյութերը, «Արմենպրես», 14.09.2018. անգլերեն տարբերակը, «Ազատություն», 18.09.2018. խոստովանական ցուցմունքները, «Արմենպրես», 04.02.2019. դատավճիռը:

ՍԱՍ-ի Արտակն ու ՀԴԲ-ն. հարցեր՝ «անհավանական մեծ գումարի» վերաբերյալ

Մինչ «Զիբիլիքսի» գործը դեռ կարճված էր, 2018 թվականի մայիսին «Փաստ» օրաթերթը գրեց, թե Արտակ Սարգսյանը հայտնվել է ԱՄՆ Հետաքննությունների դաշնային բյուրոյի ուշադրության կենտրոնում: Մայիսի 17-ի հրապարակման մեջ թերթը, հղում անելով անանուն աղբյուրին, պնդում էր, որ Սարգսյանն ԱՄՆ է փոխանցել «անհավանական մեծ գումար», և հենց այդ փոխանցումն է գրավել ամերիկացի քննիչների ուշադրությունը: Թերթը չէր նշել ո՛չ գումարի չափը, ո՛չ ստացողին:

Դեռ մայիսի 10-ին՝ Արտակ Սարգսյանի մասին հրապարակումից մեկ շաբաթ առաջ, «Արմենպրեսը» հրապարակել էր իր հարցումներին տրված պատասխանները՝ ՀԴԲ աշխատակիցների ենթադրյալ այցի վերաբերյալ: Ըստ շրջանառվող տեղեկությունների՝ այցի նպատակը Հայաստանից կապիտալի հնարավոր ապօրինի արտահոսքն ուսումնասիրելն էր: Ո՛չ ԱՄՆ դեսպանատունը, ո՛չ ՀՀ գլխավոր դատախազությունն ուղղակիորեն չէին հերքել այցի մասին տեղեկությունը: Սակայն նրանց պատասխաններն էապես տարբերվում էին:

«Մեր քաղաքականության համաձայն՝ մենք իրավասու չենք հաստատելու, հերքելու կամ քննարկելու իրավապահ մարմինների քննություններին առնչվող տեղեկությունները»,— հայտնել էին դեսպանատնից:

Դատախազությունն այլ կերպ էր պատասխանել. «Հայաստանի Հանրապետության դատախազությունը նշված նպատակով նման խմբի այցի մասին տեղեկություններ չունի»:

Դեսպանատունը վկայակոչել էր տեղեկություններ հրապարակելու իր կանոնները: Դատախազությունը՝ տեղեկություններ չունենալը:

Մեր ուսումնասիրած նյութերում չհաջողվեց գտնել նաև անձամբ Արտակ Սարգսյանի հրապարակային հերքումը:

Աղբյուրներ. «Փաստ», 17.05.2018. Արտակ Սարգսյանն ու ՀԴԲ-ն, Factor, 17.05.2018. «Փաստի» տեղեկությունը, «Արմենպրես», 10.05.2018. ԱՄՆ դեսպանատան և ՀՀ գլխավոր դատախազության պատասխանները:

ՍԱՍ-ի Արտակ. ՀՀԿ-ից հեռանալն ու Փաշինյանին աջակցելը

2018 թվականի թավշյա հեղափոխությունից հետո Արտակ Սարգսյանն այն հանրապետական պատգամավորների թվում էր, որոնք աջակցեցին Նիկոլ Փաշինյանի իշխանության գալուն:

2018 թվականի մայիսի 8-ին նա ՀՀԿ խմբակցության ևս 12 պատգամավորի հետ կողմ քվեարկեց Փաշինյանին վարչապետ ընտրելուն: Սա կուսակցության ղեկավարության դեմ ինքնուրույն ընդվզում չէր. ՀՀԿ-ն պաշտոնապես որոշել էր ապահովել անհրաժեշտ թվով ձայները՝ չնայած ինքը դեմ էր Փաշինյանի թեկնածությանը:

2018 թվականի հունիսի 5-ին՝ իշխանափոխությունից մեկ ամիս էլ չանցած, Սարգսյանը հայտարարեց ՀՀԿ-ից և նրա խորհրդարանական խմբակցությունից դուրս գալու մասին: Որոշումը նա բացատրեց նոր իշխանության ձևավորմամբ և քաղաքական իրավիճակի փոփոխությամբ՝ նշելով, որ կշարունակի աշխատել որպես անկախ պատգամավոր: Ընդ որում՝ նրա հայտարարության մեջ ո՛չ Սերժ Սարգսյանի հասցեին քննադատություն կար, ո՛չ էլ Փաշինյանին աջակցելու ուղղակի խոսք:

Սարգսյանը ՀՀԿ խմբակցությունը լքած հինգերորդ պատգամավորն էր: Սակայն այս հեռացումների պատճառը, հնարավոր է, միայն քաղաքական կողմնորոշման փոփոխությունը չէր: Հունիսի 6-ին «ԱրմԻնֆոն», հղում անելով ՀՀԿ գործարար շրջանակների իր աղբյուրներին, հայտնեց, որ կուսակցության հետ կապված գործարարների ձեռնարկություններում անցկացվող ստուգումների պայմաններում Սերժ Սարգսյանը ոչ պաշտոնական հանդիպում է ունեցել պատգամավորների հետ: Գործակալության տեղեկություններով՝ նա գործարարներին թույլ էր տվել դուրս գալ ՀՀԿ-ից, եթե դա բխում էր նրանց շահերից:

Արդեն 2018 թվականի հոկտեմբերի 9-ին Արտակ Սարգսյանը Սամվել Ալեքսանյանի և ևս 12 պատգամավորի հետ ստորագրեց հայտարարություն՝ աջակցելով նույն տարվա դեկտեմբերին արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու Նիկոլ Փաշինյանի դիրքորոշմանը:

Փաստաթղթում ուղղակիորեն ասվում էր. «Աջակցում ենք վարչապետ Նիկոլ Փաշինյանի դիրքորոշմանը՝ 2018 թվականի դեկտեմբերին արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու վերաբերյալ»:

Այս իրադարձությունների համատեքստում առանձնակի հետաքրքրություն էր առաջացնում նաև Սարգսյանի ու Սասուն Միքայելյանի վաղեմի ընտանեկան կապը: Հիշեցնենք՝ դեռ 2014 թվականին «Ժողովուրդը» գրել էր, որ Միքայելյանը SAS-ի սեփականատիրոջ երկու երեխաների կնքահայրն է: Հեղափոխության օրերին Միքայելյանն արդեն Փաշինյանի քաղաքական զինակիցներից էր, իսկ 2018 թվականի ապրիլի 6-ին միացել էր նրա նախաձեռնած «Իմ քայլը» շարժմանը:

Իշխանափոխությունից հետո այս վաղեմի ընտանեկան կապն օգտակար եղա՞վ SAS-ի սեփականատիրոջը: Հարցն առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում՝ հաշվի առնելով նոր իշխանության հետ Սարգսյանի հետագա հարաբերությունները:

Այսպիսով՝ Սարգսյանի քաղաքական շրջադարձը տեղի ունեցավ ընդամենը մի քանի ամսում. մայիսին նա Փաշինյանի օգտին քվեարկեց ՀՀԿ-ի համաձայնեցված որոշմամբ, հունիսին լքեց Սերժ Սարգսյանի կուսակցությունը, իսկ հոկտեմբերին արդեն հրապարակավ սատարում էր նոր վարչապետի քաղաքական նախաձեռնությանը:

Աղբյուրներ. «Արմենպրես», 08.05.2018. Փաշինյանի օգտին քվեարկությունը, «Ազատություն» ռադիոկայան, 05.06.2018. ՀՀԿ-ից դուրս գալը, «ԱրմԻնֆո», 06.06.2018. պատգամավորների

հեռացումը ՀՀԿ-ից, Asekose, 09.10.2018. աջակցություն արտահերթ ընտրություններին, «Ժողովուրդ», 17.03.2014. ընտանեկան կապերը, NEWS.am, 06.04.2018. Սասուն Միքայելյանն ու «Իմ քայլը»:

SAS-ն ու բարեգործական ծրագրերը. բազմամիլիոն մատակարարումներ՝ առանց ԱԱՀ-ի

Այդ ընթացքում SAS Group-ի անունը շարունակում էր հայտնվել բարեգործական ծրագրերի շրջանակում իրականացվող մատակարարումների վերաբերյալ պաշտոնական որոշումներում: Այդ մատակարարումների համար նախատեսվում էր ազատում ավելացված արժեքի հարկից՝ ԱԱՀ-ից:

2019 թվականի մարտի 1-ին ՀՀ փոխվարչապետի որոշմամբ հաստատվեց «Օրրան» բարեգործական կազմակերպության ծրագիրը, որով նախատեսվում էր 2019 թվականի ընթացքում «ՍԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ից ձեռք բերել 28 միլիոն դրամի սննդամթերք՝ առանց ԱԱՀ-ի: Ուշագրավ է, որ պայմանագիրը կնքվել էր դեռ 2017 թվականի դեկտեմբերի 18-ին՝ մինչև Փաշինյանի իշխանության գալը:

2020 թվականի փետրվարի 1-ին փոխվարչապետի նոր որոշմամբ «Օրրանի» ծրագրում կրկին ներառվեցին SAS Group-ից 28 միլիոն դրամի մատակարարումներ՝ առանց ԱԱՀ-ի:

2021 թվականին «Օրրանի» ծրագրով SAS Group-ից նախատեսվող գնումների ծավալը հասավ 45,5 միլիոն դրամի, իսկ 2022-ին՝ 47 միլիոնի:

Զուգահեռաբար SAS Group-ը համագործակցում էր «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի՝ COAF-ի հետ: Փոխվարչապետի՝ 2021 թվականի մարտի 17-ի որոշմամբ ընկերության՝ նույն տարվա ապրիլից դեկտեմբեր նախատեսված 5 միլիոն դրամի մատակարարումները ներառվեցին ԱԱՀ-ից ազատվող գործարքների ցանկում: 2022 թվականի հունիսի 24-ին նույն արտոնությունը սահմանվեց ևս 5 միլիոն դրամի մատակարարումների համար՝ 2022 թվականի հունիսի 1-ից մինչև 2023 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում: Հիմքը 2020 թվականի հունվարի 17-ին կնքված պայմանագիրն էր:

Այսպիսով՝ պաշտոնական փաստաթղթերը վկայում են, որ SAS Group-ը տևական ժամանակ մասնակցել է բարեգործական ծրագրերի, որոնց շրջանակում որոշակի մատակարարումներ ազատվել են ԱԱՀ-ից: Ընդ որում՝ իշխանափոխությունից հետո «Օրրանի» ծրագրով ընկերությունից նախատեսվող գնումների ծավալը 28 միլիոն դրամից հասել է 47 միլիոնի:


Կոզեռն ու ՍԱՍ-ի Արտակը. գործարարին՝ գովեստ, հարևանին՝ անվերջ քաշքշուկ

Մինչ SAS Group-ը պաշտոնական որոշումներում ներկայացվում էր որպես բարեգործական ծրագրերի մատակարար, Երևանի Կոզեռն թաղամասի բնակիչ Նորիկ Եփրեմյանը տարիներ

շարունակ պետությունից միանգամայն այլ բան էր ակնկալում՝ իր իրավունքների պաշտպանությունն Արտակ Սարգսյանի հետ վեճում: Հեղափոխությունից հետո նա արդարության հասնելու հույս էր կապել նոր իշխանության հետ: Սակայն, ինչպես պարզվեց, իշխանափոխությունն էլ նրա խնդրին լուծում չբերեց:

Պատմությունը սկսվել էր դեռ 2005 թվականին: Եփրեմյանը պնդում էր, որ Արտակ Սարգսյանը, հարևանությամբ հսկայական առանձնատուն կառուցելով, յուրացրել է դեպի իրենց տուն տանող երկու ճանապարհները, որոնց տեղում հայտնվել են խորովածանոց և մանկական խաղահրապարակ: Տասնմեկ հոգանոց ընտանիքը փաստացի կտրվել էր փողոցից. տանը չէին կարող մոտենալ նույնիսկ շտապօգնության և հրշեջ մեքենաները:

Եփրեմյանը պատմում էր սպառնալիքների, ծեծի և նախագահին, քաղաքապետարանին ու դատարաններին ուղղված անարդյունք դիմումների մասին: 2012 թվականին նա բաց նամակ հրապարակեց, իսկ 2015-ին դեռ շարունակում էր պայքարել իր խախտված իրավունքները վերականգնելու համար:





Տեղի ունեցավ «թավշյա» հեղափոխությունը: Եվ մինչ Կոզեռնի բնակիչը նոր իշխանությունից արդարություն էր սպասում, նրա ներկայացուցիչներն արդեն գովեստով էին խոսում Հայաստանի նախկին ղեկավարության շրջապատի գործարարների մասին:

2019 թվականի ապրիլի 3-ին Պետական եկամուտների կոմիտեի նախագահ Դավիթ Ալանյանն Արտակ Սարգսյանի և Սամվել Ալեքսանյանի բիզնեսները մատնանշեց որպես ՀԴՄ կտրոններ

բարեխղճորեն տրամադրելու օրինակ՝ նշելով նաև Ալեքսանյանի ձեռնարկությունների վճարած հարկերի աճը:

Ուշագրավ է, որ նույն օրը «Ժամանակ» թերթը հայտնեց, թե, իր տեղեկություններով, Սարգսյանը, Ալեքսանյանը և նախկին իշխանության շրջապատի մի շարք այլ գործարարներ պատմում են, որ քրեական գործերի առնչությամբ վճարել են իրենցից պահանջված գումարները, ինչից հետո կարողացել են անարգել վերադառնալ բիզնեսին:

Իսկ 2019 թվականի մայիսի 21-ին Նորիկ Եփրեմյանը կրկին պաշտպանություն էր խնդրում՝ այս անգամ արդեն Նիկոլ Փաշինյանից: Վարչապետին նամակ փոխանցելով՝ նա դժգոհում էր, որ 14 տարվա ընթացքում այդպես էլ չի կարողացել լուծել իր խնդիրը, իսկ նոր իշխանության պաշտոնյաները շարունակում են իրեն մի աշխատասենյակից մյուսն ուղարկել:

Այսպիսով՝ 14 տարի անց էլ Կոզեռնի բնակիչը դեռ փորձում էր արդարության հասնել SAS-ի սեփականատիրոջ հետ վեճում: Հեղափոխությունը փոխել էր իշխանությանը, բայց նրա խնդիրը չէր լուծել: Եվ մինչ Եփրեմյանը կրկին դռնեդուռ էր ընկնում, նոր իշխանության ներկայացուցիչներն արդեն Սարգսյանի բիզնեսն օրինակ էին բերում:

Աղբյուրներ. «Առավոտ», 29.08.2012. Նորիկ Եփրեմյանի նամակը, «Հետք», 29.08.2012. «Մեզ դանդաղ սպանում են», Mamul.am, 12.02.2015. մուտքի ճանապարհների շուրջ վեճը, Aysor.am, 21.05.2019. դիմում Փաշինյանին, NEWS.am / «Ժամանակ», 03.04.2019. գործարարների վճարումները, «Հայկական ժամանակ», 03.04.2019. ՊԵԿ նախագահի հայտարարությունը:

Արտակ Սարգսյանն ու Փաշինյանը. իշխանության սեղանակիցը դառնալու գինը

Մինչ Նորիկ Եփրեմյանը շարունակում էր արդարություն փնտրել նոր իշխանության մոտ, միանգամայն այլ կերպ էին զարգանում Արտակ Սարգսյանի բիզնեսի և վարչապետի ընտանիքին առնչվող բարեգործական նախաձեռնությունների հարաբերությունները:

2018 թվականի իշխանափոխությունը չխանգարեց SAS գործարար կայսրությանը շարունակել գործունեությունն ու համագործակցությունը բարեգործական կազմակերպությունների հետ: Ավելին՝ արդեն 2019 թվականին Արտակ Սարգսյանի ընկերությունն այն հիմնադրամի գործընկերների թվում էր, որի հոգաբարձուների խորհուրդը գլխավորում էր նոր վարչապետի կինը՝ Աննա Հակոբյանը:

2019 թվականի մայիսի 7-ին «Ժպիտի քաղաք» (City of Smile) հիմնադրամը հրապարակավ շնորհակալություն հայտնեց SAS Sweet ընկերությանը՝ փոխանցած 1 միլիոն 688 հազար դրամի համար: Գումարը գոյացել էր նույն տարվա փետրվար–մարտ ամիսներին City of Smile տորթերի և թխվածքների հատուկ տեսականու վաճառքից: Հիմնադրամը SAS Sweet-ին անվանեց իր «համեղ գործընկերը»:

Սակայն ՀՀԿ նախկին պատգամավորի բարեգործությունն անհարմար հարցերի առիթ դարձավ:

2019 թվականի մայիսի 27-ի ասուլիսում Աննա Հակոբյանին հարց ուղղեցին Արտակ Սարգսյանի և Սամվել Ալեքսանյանի նվիրատվությունների մասին: Լրագրողները հիշեցրին, որ ընդդիմադիր եղած տարիներին Նիկոլ Փաշինյանը քննադատում էր երկրի ղեկավարների ընտանիքների հետ կապված հիմնադրամներին գործարարների նվիրատվությունները՝ դրանցում տեսնելով իշխանության բարեհաճությունը շահելու փորձեր: Այժմ նույն գործարարները գումար էին նվիրաբերում նրա կնոջ հիմնադրամներին:

Հակոբյանը մերժեց նման զուգահեռները՝ դրանք համարելով ժամանակի անիմաստ վատնում: Նրա խոսքով՝ հիմնադրամները բաց են բոլոր ցանկացողների համար՝ անկախ նրանց անցյալից, իսկ նվիրատվությունները չեն նշանակում, թե նվիրատուներն իշխանության հետ հատուկ հարաբերություններ ունեն:

Երկու օր անց՝ 2019 թվականի մայիսի 29-ին, NEWS.am-ը, հղում անելով «Ժամանակ» թերթին, հրապարակեց Ապարանում լրագրողների զրույցն Արտակ Սարգսյանի հետ: Հարցին, թե այժմ ինչով է զբաղվում, նախկին պատգամավորը պատասխանել էր, որ վերջապես հանգիստ զբաղվում է բիզնեսով և որևէ դժվարություն չունի:

Երբ լրագրողը նկատել էր, թե, ըստ լուրերի, նա լավացրել է հարաբերությունները նոր իշխանության հետ, Սարգսյանը հայտարարել էր. «Ես նոր իշխանության հետ միշտ լավ հարաբերություններ եմ ունեցել»:

Լրագրողների վկայությամբ՝ այս խոսքերից հետո նա գրկախառնվել էր նախկին գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի և գործարար Սամվել Ալեքսանյանի հետ: Պաշտոնական մասի ավարտից հետո Ալեքսանյանն ու Սարգսյանը տոնակատարությունը շարունակել էին ապարանցիների հետ՝ պարելով ավանդական երգերի հնչյունների ներքո:



Այսպիսով՝ ՀՀԿ-ից հեռանալուց մեկ տարի անց Սարգսյանը վստահեցնում էր, որ հանգիստ զբաղվում է բիզնեսով, դժվարություններ չունի և լավ հարաբերություններ է պահպանում նոր իշխանության հետ:

Աղբյուր. NEWS.am, 29.05.2019. հարաբերությունները նոր իշխանության հետ:

Terrazza. ծեծկռտուք, թիկնապահներ և անսպասելի վկա

Սակայն այս հայտարարությունից ընդամենը մեկ շաբաթ անց Արտակ Սարգսյանի անունը կրկին հայտնվեց քրեական լրահոսում:

2019 թվականի հունիսի 5-ին Երևանի Terrazza ռեստորանում ծեծկռտուք տեղի ունեցավ: Լրատվամիջոցների հաղորդմամբ՝ Սարգսյանն աղմուկ-աղաղակով դուրս էր վազել բացօթյա հատված՝ կանչելով թիկնապահներին: Շուտով ժամանել էին ոստիկանները: Ըստ հրապարակումների՝ հարվածներ էր ստացել նաև ինքը՝ նախկին պատգամավորը:

Հունիսի 8-ին քրեական գործ հարուցվեց զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիգանության հոդվածով:

Սակայն ուշագրավ է նաև այս պատմության մեկ այլ մասնակցի անունը՝ Արամ Քոչարյան՝ բավական ուշագրավ կենսագրությամբ ռուսաստանաբնակ հայ գործարար:



Լուսանկարում՝ Արամ Քոչարյանը

Դեռ 2015 թվականին «Ժողովուրդ» օրաթերթը նրան ներկայացնում էր որպես Սերժ Սարգսյանի ենթադրյալ հովանավորյալ: Հղում անելով «Հրապարակի» հրապարակմանը՝ թերթը հայտնում էր, որ 2011 թվականին քրեական հեղինակություններ Անդրանիկ Սողոյանը՝ Զապը, և Գևորգ Մելքումյանը՝ Օշականցի Գևորիկը, փորձել են Քոչարյանից խլել նրա բիզնեսի մի մասը: Վերջինս, իբր, անձամբ Սերժ Սարգսյանին է դիմել օգնության խնդրանքով, որից հետո Սարգսյանը կարգադրել է շորթմամբ զբաղվողներին ճաղերի հետևում փակել:

Նույն թերթի տեղեկություններով՝ 2013 թվականին Քոչարյանի նկատմամբ առանձնապես խոշոր չափերի խարդախության գործ էր հարուցվել, նրան կալանավորելու որոշում էր կայացվել, և հայտարարվել էր հետախուզում: Սակայն շուտով կալանավորման ու հետախուզման որոշումները վերացվել էին, իսկ գործը՝ կարճվել:

2014 թվականին «Իրավունք» թերթը Քոչարյանի անունը կապել էր քրեական հեղինակություն Թևոսիկի եղբոր՝ Արթուր Սաֆարյանի սպանությունը պատվիրելու կասկածների հետ: Գործարարը պատվի և արժանապատվության պաշտպանության հայցով դիմել էր դատարան: 2015 թվականի մայիսին դատարանը մասնակի բավարարել էր նրա պահանջները՝ թերթին պարտավորեցնելով հերքում հրապարակել և վճարել 500 հազար դրամ փոխհատուցում: Թերթը բողոքարկել էր վճիռը:

Նույն՝ 2015 թվականին «Բնական քարերի մշակման «Մովսիսյան» ձեռնարկություն» ՍՊԸ-ի տնօրեն, գործարար Էդիկ Մովսիսյանը հրապարակավ մեղադրել էր Քոչարյանին մոտ 60 միլիոն դրամ արժողությամբ շինարարական սարքավորումներ յուրացնելու մեջ: Նրա խոսքով՝ ոստիկանությունը կատարվածը համարել էր քաղաքացիաիրավական վեճ:

Եվ ահա 2019 թվականի հունիսին այս գործարարը Terrazza ռեստորանում Արտակ Սարգսյանի ընկերակցությամբ էր:

2019 թվականի օգոստոսին Սարգսյանին կանչեցին հարցաքննության: Սակայն հետագայում նա հրաժարվեց ցուցմունք տալուց: Դատաբժշկական փորձաքննություն անցնելուց հրաժարվեցին թե՛ Սարգսյանը, թե՛ Քոչարյանը, թե՛ ևս չորս վկաներ, որոնք պնդում էին, որ իրենց մասնակցությամբ որևէ միջադեպ չի եղել:

Դեկտեմբերի դրությամբ քննությունն այդպես էլ չէր պարզել դեպքի հանգամանքները: Մեղադրյալներ չկային:

Այսպիսով՝ թավշյա հեղափոխությունից մեկ տարի անց նույն ռեստորանում հայտնվել էին երկու գործարարներ, որոնց անունները կապվում էին նախկին իշխանության և Սերժ Սարգսյանի շրջապատի հետ: Ի՞նչն էր նրանց միավորում: Եվ ի՞նչ էր տեղի ունեցել Terrazza-ում, եթե սկզբում թիկնապահների ու ոստիկանության միջամտության կարիք էր զգացվել, իսկ հետո վկաները սկսել էին պնդել, թե ոչինչ չի եղել:

Աղբյուրներ. VERELQ, 14.08.2019. միջադեպն ու քրեական գործը, «Ա1+». տեղեկություններ քննությունից, 168.am / «Փաստինֆո», 11.12.2019. ցուցմունքից և փորձաքննությունից հրաժարվելը, «Ժողովուրդ», 10.08.2015. Քոչարյանի գործն ու կապերը, 1in.am. հրապարակում Քոչարյանի մասին:

ՍԱՍ-ի Արտակն ու «ֆեյքերի ֆաբրիկան». Նաիրա Զոհրաբյանի մեղադրանքները

2020 թվականի նոյեմբերը Նիկոլ Փաշինյանի համար քաղաքական ամենածանր փորձություններից մեկը դարձավ: 44-օրյա պատերազմում կրած պարտությունից և եռակողմ հայտարարության ստորագրումից հետո երկրում զանգվածային բողոքի ցույցեր սկսվեցին՝ նրա հրաժարականի պահանջով: Իշխանության ու ընդդիմության սուր դիմակայության պայմաններում առանձնակի նշանակություն ստացավ հարցը, թե ով և ինչ միջոցներով է աջակցում վարչապետին:

Հենց այդ օրերին Արտակ Սարգսյանի անունը կրկին հայտնվեց քաղաքական մեղադրանքների կենտրոնում:

2020 թվականի նոյեմբերի 12-ին «Բարգավաճ Հայաստան» խմբակցության պատգամավոր Նաիրա Զոհրաբյանը չորս խոշոր գործարարի հրապարակավ մեղադրեց իշխանամետ «ֆեյքերի ֆաբրիկաները» ֆինանսավորելու մեջ: Նրա նշած անուններն էին Խաչատուր Սուքիասյանը, Սամվել Ալեքսանյանը, Վիգեն Բադալյանը և Արտակ Սարգսյանը:

Ֆեյսբուքյան իր էջում Զոհրաբյանը պնդում էր, որ այս գործարարների գումարներով գործում են տասնյակ հազարավոր կեղծ օգտահաշիվներ և տասնյակ կեղծ լրատվական կայքեր, որոնք արշավներ են կազմակերպում Նիկոլ Փաշինյանի ընդդիմախոսների դեմ և հասարակության մեջ ատելություն սերմանում:

«Հիշե՛ք նրանց անունները»,— կոչ էր անում պատգամավորը՝ նշված գործարարներին անվանելով սեփական քաղաքացիների դեմ տեղեկատվական պատերազմի ֆինանսական հովանավորներ:

Նոյեմբերի 17-ին Զոհրաբյանը նոր հայտարարությամբ հանդես եկավ: Նրա խոսքով՝ իր նշած չորս գործարար խմբերից երկուսն արդեն դադարեցրել էին իրենց «ֆեյքերի ֆաբրիկաների» ֆինանսավորումը: Նա նաև պնդում էր, որ այդպիսի ցանցերից մեկի աշխատանքը համակարգում էր այն ժամանակվա ԱԺ փոխնախագահ Ալեն Սիմոնյանը:

«Այս մարդիկ 2,5 տարի ֆինանսավորել են Հայաստանում ավերածությունը, թշնամանքն ու ատելությունը»,— հայտարարել էր Զոհրաբյանը՝ պահանջելով նրանց պատասխանատվության ենթարկել:

Սակայն պատգամավորը չէր հստակեցրել, թե չորս գործարարներից ովքեր էին դադարեցրել ենթադրյալ ֆինանսավորումը:

Ուսումնասիրված հրապարակումներում չկա նաև այս մեղադրանքներին Սարգսյանի հրապարակային պատասխանը:

«Չինացի թիկնապահներ». ո՞ւմ էր պաշտպանում ՍԱՍ-ի Արտակը

Սակայն տեղեկատվական արշավը ֆինանսավորելու մեղադրանքներով պատմությունը չավարտվեց: Ընդամենը մի քանի օր անց Արտակ Սարգսյանի անունը կրկին հնչեց՝ Նիկոլ Փաշինյանին ենթադրյալ աջակցություն ցուցաբերելու առնչությամբ: Այս անգամ խոսքը կեղծ օգտահաշիվների մասին չէր, այլ իշխանության հակառակորդներին բերման ենթարկող մարդկանց:

2020 թվականի նոյեմբերի 20-ին բողոքի ցույցը ցրելիս նկատվել էին սև համազգեստով ու դիմակներով մարդիկ: Նրանց հագուստին չինարեն գրություններ կային, իսկ Հայաստանի ոստիկանության սովորական տարբերանշանները բացակայում էին: Նրանք մասնակցում էին ցուցարարներին բերման ենթարկելուն, այդ թվում՝ ուժ գործադրելով:

«Հրապարակ» թերթը գրեց կասկածների մասին, թե դիմակների տակ ոչ թե ոստիկաններ են, այլ խոշոր գործարարների թիկնապահներ, որոնց ներգրավել են հակակառավարական ցույցերը ճնշելու համար: Սոցիալական ցանցերում հնչում էին կոնկրետ անուններ՝ Խաչատուր Սուքիասյան, Սամվել Ալեքսանյան և Արտակ Սարգսյան: Պնդումներ կային, թե գործարարներն իրենց թիկնապահներին ուղարկել են ոստիկանությանն օգնության՝ ի աջակցություն Փաշինյանի:

Նոյեմբերի 22-ին Արտակ Սարգսյանը հրապարակավ հերքեց մեղադրանքները՝ ֆեյսբուքյան իր էջում հայտարարելով, որ իր մասին «սուտ և զրպարտություն» են տարածում:

Ոստիկանությունը նույնպես հերքեց ցույցերը ցրելուն կողմնակի անձանց մասնակցությունը: Անսովոր համազգեստի մասին էլ պարզաբանեց, որ ոստիկանության զորքերի ծառայողները վերադարձել էին պատերազմից, նրանց համազգեստներն անպիտան էին դարձել, իսկ պահեստներից տրամադրված հագուստի վրա չէին հասցրել հայերեն գրություններ ավելացնել:

Սակայն պատմությունն այսքանով չավարտվեց: Նոյեմբերի 25-ին Ազգային անվտանգության ծառայության նախկին տնօրեն Արթուր Վանեցյանը հրապարակավ հայտարարեց, որ չինարեն գրություններով համազգեստ կրող մարդիկ ոստիկանության հետ կապ չունեն և քրեական կառույցների ու օլիգարխների թիկնազորերի ներկայացուցիչներ են: Իր կասկածները հիմնավորելու համար նա մատնանշում էր բերման ենթարկողների ոչ պրոֆեսիոնալ գործողություններն ու նրանցից ոմանց մորուք ունենալը:

Այսպիսով՝ ցույցը ցրելիս անսովոր համազգեստով մարդկանց ներկայությունն իրական, ոչ թե հորինված դրվագ էր:

Ուշագրավ էր նաև նման մեղադրանքների ի հայտ գալը. հեղափոխությունից երկու տարի անց ՀՀԿ նախկին պատգամավորին արդեն կասկածում էին այն իշխանությանն ուժային աջակցություն ցուցաբերելու մեջ, որին ընդդիմանում էր նրա նախկին կուսակցությունը:

Աղբյուրներ. «Հրապարակ», 12.11.2020. Զոհրաբյանի մեղադրանքները, «Հրապարակ», 20.11.2020. ուժայինների անսովոր համազգեստը, «Հրապարակ», 21.11.2020. օլիգարխների

թիկնազորերը, Sputnik Արմենիա, 22.11.2020. Սարգսյանի հերքումը, Panorama.am, 25.11.2020. Վանեցյանի հայտարարությունը, Sputnik Արմենիա, 25.11.2020. Քոչարյանի մեկնաբանությունը:

Հողամաս՝ «Ձրաշխարհի» հարևանությամբ. որդիները, եղբորորդին և SAS-ի միլիոնները

Մինչ իշխանության փոփոխության հետ փոխվում էր նաև Արտակ Սարգսյանի քաղաքական դիրքը, ընտանեկան բիզնեսը շարունակում էր նոր ակտիվներ ձեռք բերել: Այդ նախագծերից մեկը Մյասնիկյան պողոտայի 38 հասցեում՝ «Ձրաշխարհի» հարևանությամբ նախատեսվող առևտրային համալիրն էր:

Հողամասի պատմությունը սկսվել էր դեռ 2000 թվականին, երբ «Լուիզաս» ընկերությունը ձեռնամուխ էր եղել նախկինում ավտոսպասարկման համար օգտագործվող տարածքի փաստաթղթերի ձևակերպմանը: Սակայն հեղափոխությունից հետո առաջին պլան եկավ արդեն Սարգսյանների ընտանիքի հաջորդ սերունդը:

2020 թվականի հոկտեմբերի 26-ին «Լուիզասի» միակ սեփականատերը դարձավ Արտակի որդին՝ Տիգրան Սարգսյանը: Գրանցման փաստաթղթերում հետագայում նշվել է նրա՝ Վանուատուի քաղաքացիությունը: Ընդ որում՝ 2022 թվականին նրա անունից փաստաթղթեր ստորագրելու իրավունք ստացան ծնողները՝ Արտակ և Էլվինա Սարգսյանները:

Եվս երեք հողամաս 2020 թվականի նոյեմբերին ժառանգության փաստաթղթերով հավասար բաժիններով անցավ Արտակի որդիներին՝ Դավիթին ու Տիգրանին, և նրանց հորեղբորորդուն՝ Արամ Սարգսյանի որդի Սամվելին: 2024 թվականին ընդհանուր առմամբ ավելի քան 7,3 հազար քառակուսի մետր մակերեսով այս չորս հողամասերին տրվեց միասնական հասցե:

Նոր իշխանության օրոք նախագիծն անցավ համաձայնեցման մի շարք փուլեր. 2021 թվականին տրվեց նախագծման նախնական թույլտվություն, 2022 թվականի ապրիլին՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք, իսկ ավելի ուշ՝ բնապահպանական դրական եզրակացություն: Նախատեսվում էր կառուցել համալիր՝ SAS սուպերմարկետով, սննդի կետով, խանութներով, գրասենյակներով և 600–650 մարդու համար նախատեսված ստորգետնյա ապաստարանով:

Սակայն հատկապես ուշագրավ է նախագծի ֆինանսական կողմը: 2024 թվականի աուդիտի համաձայն՝ «Լուիզասը» ստացած փոխառությունների գծով «ՍԱՍ-Գրուպին» պարտք էր 137,7 միլիոն դրամ:

Այսպիսով՝ նոր իշխանության օրոք հողային ակտիվներն արդեն գրանցվում էին ընտանիքի հաջորդ սերնդի ներկայացուցիչների անունով, նախագիծը ստանում էր անհրաժեշտ համաձայնեցումները, իսկ ընտանեկան շինարարական ընկերությունը պահպանում էր ֆինանսական կապը SAS-ի գործող բիզնեսի հետ:



Լուսանկարում՝ «Ջրաշխարհի» հարևանությամբ նախատեսվող առևտրային համալիրի տարածքը:

Աղբյուրներ. «Հետք», 09.05.2023. առևտրի կենտրոն՝ «Ջրաշխարհի» հարևանությամբ, ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն. «Լուիզասի» նախագիծը, ARLIS. իրավական ակտը, SAS Group. 2024 թվականի աուդիտը:

ՍԱՍ-ի Արտակի օֆշորները. քրեական գործ կա, իսկ ինքը գործով չի անցնում

Մինչ ընտանեկան բիզնեսը նոր ակտիվներ էր ձեռք բերում, Սարգսյանների արտասահմանյան ընկերությունների պատմությունն արդեն քրեական գործի առիթ դարձավ:

2022 թվականի ապրիլի 29-ին «Հետքը» հրապարակեց «Պանդորայի փաստաթղթերի» (Pandora Papers) հիման վրա պատրաստված հետաքննություն՝ բացահայտելով նախկին պատգամավոր Արտակ Սարգսյանի և նրա եղբայր Արամի արտասահմանյան բիզնեսները:

Լրագրողները պարզել էին, որ եղբայրներին հավասար բաժիններով պատկանել է Բրիտանական Վիրջինյան կղզիներում գրանցված SADA Holding and Investment Inc.-ը, որի միջոցով նրանք վերահսկել են կիպրական SDA Trade Chain Group Limited ընկերությունը: Սակայն օֆշորային ընկերությունում իր բաժնեմասը Արտակ Սարգսյանը հայտարարագրերում չէր նշել:

Նա չէր հայտարարագրել նաև ամերիկյան SAS USA LLC ընկերության 50 տոկոս բաժնեմասը: Ընդ որում՝ 2012 թվականի խորհրդարանական ընտրություններից առաջ Սարգսյանն ինքն էր այդ բաժնեմասը նշել Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացրած հայտարարագրում: Սակայն հետագայում ընկերությունն անհետացել էր Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով ներկայացված փաստաթղթերից:

2022 թվականի մայիսի 2-ին Գլխավոր դատախազությունը «Հետքի» հրապարակումն ուղարկեց Հակակոռուպցիոն կոմիտե, իսկ մայիսի 15-ին քրեական գործ հարուցվեց ՀՀ նախկին քրեական

օրենսգրքի 314.3-րդ հոդվածի 2-րդ մասով: Խոսքը հայտարարագրման ենթակա՝ առանձնապես խոշոր չափերի՝ ավելի քան 1 միլիոն դրամի գույքի կամ եկամուտների մասին տվյալները ենթադրաբար թաքցնելու մասին էր: Հոդվածը նախատեսում էր երկուսից չորս տարվա ազատազրկում:

2023 թվականի հունվարի 5-ին «Հետքը» հայտնեց, որ քննությունը շարունակվում է, սակայն գործով մեղադրյալներ չկան:

2024 թվականի հուլիսի 9-ին Գլխավոր դատախազությունը կրկին հաստատեց՝ նախաքննությունը շարունակվում է: Բայց պարզվեց մի ուշագրավ հանգամանք. Արտակ Սարգսյանն ինքը որևէ դատավարական կարգավիճակ չուներ՝ ո՛չ վկայի, ո՛չ մեղադրյալի: Այդ պահին քննությունն արդեն ավելի քան երկու տարի էր տևում:

Քրեական գործի հարուցումից անցել է ավելի քան չորս տարի: Սակայն քննության ընթացքի մասին մեր գտած վերջին տեղեկությունները վերաբերում են 2024 թվականի հուլիսին:

Ստացվում է՝ լրագրողները բացահայտել էին արտասահմանյան ակտիվներ, որոնք, ըստ «Հետքի», նշված չէին պատգամավորի հայտարարագրերում: Նրանց հետաքննության հիման վրա քրեական գործ էր հարուցվել, բայց տարիներ անց այն մարդը, որի հայտարարագրերն այս պատմության առանցքում էին, անգամ վկայի կարգավիճակ չուներ:

Աղբյուրներ. «Հետք», 29.04.2022. «Պանդորայի փաստաթղթերը», «Հետք», 09.06.2022. քրեական գործի հարուցումը, «Հետք», 05.01.2023. քննություն՝ առանց մեղադրյալների, «Հետք», 09.07.2024. դատախազության պատասխանը:

SAS-ն ընդլայնվում է, արտասահմանյան ընկերությունները՝ փակվում. ի՞նչ եղավ ակտիվների հետ

Մինչ Սարգսյանների ընտանիքի չհայտարարագրված արտասահմանյան ակտիվների պատմությունը դառնում էր քրեական քննության առարկա, Հայաստանում SAS առևտրային ցանցը շարունակում էր ընդլայնվել:

2015 թվականին սկսեց գործել SAS Food Court-ը, իսկ 2017-ին բացվեց ութերորդ սուպերմարկետը: 2022 թվականին ցանցն արդեն ուներ ինը սուպերմարկետ, 2023-ին՝ տասը, իսկ 2024-ին բացվեց SAS Food Court-ի յոթերորդ մասնաճյուղը:

Սակայն ընտանիքի արտասահմանյան ընկերությունների ճակատագիրն այլ կերպ դասավորվեց:

Դեռ 2015 թվականի աշնանն Արամ Սարգսյանը հայկական «Բալդի» ՓԲԸ-ի բաժնետոմսերը վաճառել էր կողմնակի անձի: 2016 թվականի փետրվարին լուծարվեց ռուսաստանյան «Բալդի Ռուսաստան» ընկերությունը: 2018 թվականին հայկական «Բալդի» ՓԲԸ-ն սնանկ ճանաչվեց, իսկ 2019-ին՝ լուծարվեց: 2018 թվականի մայիսին դադարեց գործել նաև կիպրական SDA Trade Chain

Group Limited-ը, որի միջոցով Սարգսյան եղբայրները նախկինում տիրապետում էին արտասահմանյան ակտիվների:

2020 թվականի դեկտեմբերին փոխվեց բրիտանական Baldi Retail Ltd-ի սեփականատերերի շղթան. դրանից դուրս եկավ Բրիտանական Վիրջինյան կղզիներում գրանցված ընկերությունը, և անմիջական սեփականատեր դարձավ Արտակ Սարգսյանի զոքանչը՝ Եվգենյա Թումասովան: Ընդ որում՝ «Հետքի»՝ 2022 թվականի հետաքննության համաձայն՝ Հայաստանում Baldi-ի խանութները շարունակում էր սպասարկել հենց «ՍԱՍ-Գրուպը»:



Լուսանկարում՝ Արտակ Սարգսյանն ու Եվգենյա Թումասովան (աջից)

2023 թվականին ևս երկու ընկերություն դադարեց գոյություն ունենալ: Հավաքված գրանցման քաղվածքների համաձայն՝ ապրիլին լուծարվեց բրիտանական Baldi Retail Ltd-ն, իսկ հունիսին՝ ամերիկյան SAS USA LLC-ն:

Հատկապես ուշագրավ է վերջինիս պատմությունը: 2012 թվականի նախընտրական հայտարարագրում Արտակ Սարգսյանը նշել էր SAS USA LLC-ում իր 50 տոկոս բաժնեմասը: Այնուհետև ընկերությունն այլևս չէր հիշատակվում նրա պատգամավորական հայտարարագրերում, ինչն էլ դարձել էր «Հետքի» հետաքննության առարկաներից մեկը: Իսկ տարիներ անց դադարեց գոյություն ունենալ նաև ընկերությունն ինքը:

Ամերիկյան մեկ այլ ընկերության՝ Baldi USA Inc.-ի կարգավիճակի նկատմամբ Կալիֆորնիայում ավելի վաղ սահմանափակումներ էին կիրառվել՝ պարտադիր հաշվետվությունների և հարկերի հետ կապված խնդիրների պատճառով:

Այսպիսով՝ զուգահեռ զարգանում էին երկու տարբեր պատմություններ: Հայաստանում SAS-ի բիզնեսը շարունակում էր աճել, իսկ ընտանիքի արտասահմանյան ընկերությունների ցանցն աստիճանաբար նեղանում էր: Բայց ի՞նչ էր լինում լուծարված ընկերությունների ակտիվների հետ: Ո՞ւմ էր անցնում դրանց գույքը: Դադարո՞ւմ էր արդյոք բիզնեսը, թե՞ փոխվում էին միայն այն ընկերությունները, որոնց միջոցով այն իրականացվում էր:

Աղբյուրներ. «Հետք», 05.08.2016. արտասահմանյան ընկերությունները, «Հետք», 29.04.2022. «Պանդորայի փաստաթղթերը», SAS Group. ցանցի զարգացման պատմությունը:

Միլիարդներ՝ ընտանիքին. ի՞նչ բացահայտեց SAS-ի աուդիտը

Սարգսյանների ընտանիքի արտասահմանյան ընկերությունները մեկը մյուսի հետևից դադարում էին գոյություն ունենալ: Սակայն պակաս ուշագրավ զարգացումներ չէին տեղի ունենում հենց «ՍԱՍ-Գրուպի» ներսում: Ընկերության՝ Baker Tilly Armenia-ի մասնակցությամբ պատրաստված և 2025 թվականի հունիսին ստորագրված 2024 թվականի ֆինանսական հաշվետվությունները բացահայտում են միլիարդավոր դրամների շահաբաժիններ, հարազատներին տրամադրված անտոկոս փոխառություններ և ընկերությունը վերահսկող մասնակիցների կազմի վերաբերյալ անսպասելի անհամապատասխանություն:

2023 թվականին ընկերության հասույթը կազմել է 33,45 միլիարդ դրամ, իսկ 2024-ին՝ 32,30 միլիարդ: 2023 թվականի 216 միլիոն դրամ վնասից հետո ընկերությունը 2024 թվականն ավարտել է 369,5 միլիոն դրամ շահույթով: 2024 թվականի վերջի դրությամբ ակտիվների արժեքը կազմել է 37,90 միլիարդ դրամ:

Սակայն ամենաուշագրավը շահաբաժինների տվյալներն են: Չնայած 2023 թվականի վնասին՝ հաշվետվություններում արտացոլված են սեփականատերերին հատկացված 2,30 միլիարդ դրամի շահաբաժիններ, իսկ 2024 թվականի համար՝ և՛ս 3,21 միլիարդ: Ընդամենը՝ 5,51 միլիարդ դրամ երկու տարում: Միաժամանակ, 2024 թվականի վերջի դրությամբ կուտակված շահույթը բացասական էր՝ մինուս 1,58 միլիարդ դրամ: Ի՞նչ աղբյուրներից էին ապահովվում այս վճարումները, և ինչպե՞ս էին դրանք անդրադառնում ընկերության ֆինանսական վիճակի վրա:

Պակաս ուշագրավ չեն ընտանիքի անդամներին տրամադրված անտոկոս և չապահովված փոխառությունները:

2024 թվականի վերջին Արտակ Սարգսյանի պարտքը «ՍԱՍ-Գրուպին» կազմում էր 2,64 միլիարդ դրամ՝ նախորդ տարվա 4,32 միլիարդի դիմաց: Նրա եղբայր Արամի պարտքը 4,09 միլիարդից նվազել էր մինչև 2,50 միլիարդ դրամ: Սամվել Սարգսյանի պարտքը կազմում էր 533,8 միլիոն դրամ՝ 2023 թվականի 538,5 միլիոնի դիմաց:

Միլիարդավոր դրամներ էին ստանում նաև փոխկապակցված ընկերությունները: 2024 թվականի վերջի դրությամբ «Էլիզասի» պարտքը SAS-ին կազմում էր 2,81 միլիարդ դրամ, «Սենա-Արբայինը»՝ 500,2 միլիոն, «Ռովիլ Թրեյդինգինը»՝ 285,6 միլիոն, «Ռիվիերա Ռիթեյլինը»՝ 274 միլիոն, իսկ

«Լուիզասինը»՝ 137,7 միլիոն: «Իլենիայի» դեպքում պատկերը հակառակն էր. այդ ընկերությունն ինքն էր փոխառություն տրամադրել «ՍԱՍ-Գրուպին»: Վերջինիս պարտքի մնացորդը «Իլենիային» կազմում էր 429,3 միլիոն դրամ՝ մեկ տարի առաջվա 2,06 միլիարդի դիմաց:

Այս անունների հետևում կրկին ընտանեկան կապերն են: Տարբեր տարիների գրանցման փաստաթղթերի համաձայն՝ «Էլիզասը» կապված էր Արտակի կնոջ՝ Էլվինայի և Սարգսյան եղբայրների հետ, «Էլիզաս-1»-ը՝ Արտակի որդի Դավիթի, իսկ «Սենա-Արբան»՝ Էլվինայի: Մյուս ընկերությունները նույնպես հիշատակվում էին եղբայրների ընկերությունների շարքում:

Ընդ որում՝ «ՍԱՍ-Գրուպն» ինքը բանկերին զգալի գումարներ էր պարտք: 2024 թվականի վերջի դրությամբ բանկային պարտավորությունները կազմում էին 21,76 միլիարդ դրամ, որից 17,62 միլիարդը՝ «Արդշինբանկին»: Վարկատուների թվում էին նաև «Ամերիաբանկն» ու «Ակբա բանկը»:

Բայց թերևս ամենաանսպասելի անհամապատասխանությունը վերաբերում է նրան, թե ով է վերահսկում ընկերությունը:

Աուդիտորական հաշվետվության առաջին բաժնում «ՍԱՍ-Գրուպի» սեփականատերեր են նշված Արտակ և Արամ Սարգսյան եղբայրները՝ 50-ական տոկոս բաժնեմասով: Սակայն նույն փաստաթղթի 25.1 ծանոթագրությունում արդեն նշված են երեք վերահսկող մասնակիցներ՝ մոտ 33,3-ական տոկոս բաժնեմասերով՝ Արտակը, Արամը և Արտակի որդին՝ Դավիթ Սարգսյանը:

Ի վերջո, ո՞վ էր վերահսկում «ՍԱՍ-Գրուպը» 2024 թվականի վերջին: Եվ ինչո՞ւ են նույն աուդիտորական հաշվետվության մեջ սեփականատերերի երկու տարբեր կազմեր նշված՝ բաժնեմասերի իրար չհամապատասխանող բաշխմամբ:

Աղբյուրներ. SAS Group. 2024 թվականի աուդիտը, հունիս 2025, ՀՀ պետական ռեգիստր. «ՍԱՍ-Գրուպի» սեփականատերերը, ՀՀ պետական ռեգիստր. «Էլիզաս», ՀՀ պետական ռեգիստր. «Սենա-Արբա», ՀՀ պետական ռեգիստր. «Էլիզաս-1»:

«Կարմիր գծերից» մինչև 71 կայանատեղի. SAS-ն ու Երևանի քաղաքապետարանը

SAS-ի միլիարդավոր դրամների ֆինանսական գործարքները բացահայտվում են աուդիտորական հաշվետվություններում: Սակայն ընտանեկան բիզնեսի և քաղաքային իշխանության հարաբերություններն ունեն նաև երևանցիների համար շատ ավելի տեսանելի կողմ. ո՞վ է տնօրինում քաղաքի փողոցների կայանատեղերը:

Դեռ 2013 թվականի նոյեմբերի 7-ին «Ժողովուրդ» օրաթերթը հրապարակել էր «ՍԱՍ-ի Արտակի համար կարմիր գծերը չե՞ն գործում» վերնագրով նյութը: Լրագրողները հայտնում էին, որ SAS սուպերմարկետներից մեկի մոտ վարորդներից կայանման համար գումար են գանձում: Քաղաքապետարանում հայտարարել էին, որ տեղյակ չեն դրանից, իսկ առանց թույլտվության

գումար գանձելը որակել էին շորթում: Այդ գործողություններին ընկերության մասնակցությունը չէր հաստատվել:

Ավելի քան տասը տարի անց SAS-ի կայանատեղերի պատմությունն արդեն պաշտոնական շարունակություն ստացավ:

2024 թվականի մայիսի 14-ին Երևանի ավագանին «ՍԱՍ-Գրուպ» ՍՊԸ-ին թույլատրեց ցանցի՝ Արշակունյաց և Կոմիտասի պողոտաներում ու Հալաբյան փողոցում գտնվող օբյեկտների մոտ կազմակերպել 36 ծառայողական կայանատեղի: Մեկ տեղի համար տարեկան 300 հազար դրամ դրույքաչափով հաշվարկվող վճարը կազմում էր 10,8 միլիոն դրամ:

Դեռ որոշման ընդունումից առաջ Factor-ն ուշադրություն էր հրավիրել այն հանգամանքի վրա, որ քաղաքապետ Տիգրան Ավինյանի առաջարկած նախագիծն ընդգրկվել էր չզեկուցվող հարցերի շարքում: Ընդ որում՝ հատկացված տարածքներում այլ մեքենաների կայանումը սահմանափակվում էր շուրջօրյա:

2025 թվականի մարտի 18-ին քաղաքային իշխանությունը երկարաձգեց SAS-ի ծառայողական կայանատեղերի շահագործման իրավունքը՝ արդեն տասը հասցեում, ընդհանուր՝ 71 մեքենայի համար: Այդ քանակի տեղերի համար հաշվարկվող տարեկան վճարը կազմում էր 21,3 միլիոն դրամ: Կայանատեղերի մեծ մասում մյուս վարորդների համար նախատեսված սահմանափակումները գործում էին շուրջօրյա, թեև առանձին շենքերի օրինական օգտագործողների համար բացառություններ էին սահմանվել:

2026 թվականի նախագծային փաստաթղթերով նախատեսվում էր Զորավար Անդրանիկի փողոցի մասնաճյուղի մոտ կայանատեղերի թիվը երեքից դարձնել չորս, ինչի արդյունքում ընդհանուր թիվը կարող էր հասնել 72-ի:

Խոսքն, իհարկե, քաղաքային հողը SAS-ին անհատույց սեփականության հանձնելու մասին չէ: Ընկերությունն օրենքով նախատեսված վճարովի իրավունք էր ստանում՝ ծառայողական կայանատեղեր կազմակերպելու համար:

Սակայն հարցը մնում է. ինչո՞ւ են քաղաքի փողոցներում տասնյակ կայանատեղեր հատկացվում մասնավոր առևտրային ցանցին՝ մյուս վարորդների համար շուրջօրյա սահմանափակումներով: Ի՞նչ չափանիշներով էր առաջնորդվում քաղաքապետարանը, և արդյոք մյուս առևտրային ցանցերին էլ համադրելի պայմաններ էին առաջարկվում:

2013 թվականին մամուլը հարցնում էր՝ SAS-ի համար կայանման կանոնները գործո՞ւմ են: 2024–2025 թվականներին քաղաքային իշխանությունն արդեն պաշտոնական որոշումներով ցանցին էր հատկացնում տասնյակ ծառայողական կայանատեղեր: Եվ այժմ հարցերն ուղղված են ոչ միայն բիզնեսին, այլև բոլորին հասանելի քաղաքային տարածքը տնօրինելու սկզբունքներին:

Աղբյուրներ. «Ժողովուրդ», 07.11.2013. «Կարմիր գծերը» SAS-ի համար, Factor, 10.05.2024. SAS-ի կայանատեղերի նախագիծը, Երևանի ավագանի, 14.05.2024. թիվ 143-Ա որոշումը, Երևանի

ավագանի, 18.03.2025. թիվ 306-Ա որոշումը, Երևանի քաղաքապետարան. 2026 թվականի նախագիծը:

Կրկին նույն սեղանի շուրջ. ՍԱՍ-ի Արտակն ու Փաշինյանը՝ ութ տարի անց

2026 թվականի ապրիլի 13-ին՝ խորհրդարանական ընտրություններից երկու ամիս առաջ, Նիկոլ Փաշինյանն աշխատանքային նախաճաշ անցկացրեց խոշոր բիզնեսի ներկայացուցիչների հետ: Շուրջ երկու տասնյակ մասնակիցների թվում էին նաև ՀՀԿ նախկին պատգամավորներ Արտակ Սարգսյանն ու Սամվել Ալեքսանյանը:



Լուսանկարում՝ Փաշինյանի հանդիպումը գործարարների հետ, 2026 թվական

Ուշագրավ է, որ հանդիպմանը ներկա չէին վարչապետի քաղաքական ընդդիմախոսներ Սամվել Կարապետյանի «Տաշիր» և Գագիկ Ծառուկյանի «Մուլտի Գրուպ» ընկերությունների ներկայացուցիչները: Կառավարությունը չպարզաբանեց՝ նրանց առհասարակ հրավիրե՞լ էին: Անհայտ մնաց նաև, թե ինչ են քննարկել տեսախցիկներն անջատելուց հետո:

Արտակ Սարգսյանի համար այս նախաճաշը նրա քաղաքական կենսագրության միանգամայն օրինաչափ շարունակությունն էր: 2017 թվականի փետրվարին Նիկոլ Փաշինյանը դեռ խորհրդարանի ամբիոնից նրանից բացատրություն էր պահանջում SAS-ի աշխատակիցների նկատմամբ ենթադրյալ ճնշումների առնչությամբ: Ինը տարի անց նրանք նույն սեղանի շուրջ էին: Մեկը վաղուց այլևս ՀՀԿ պատգամավոր չէր, մյուսը ղեկավարում էր երկրի կառավարությունը:

Այս տարիներին Հայաստանը հեղափոխության, իշխանափոխության և քաղաքական դաշինքների փոփոխության միջով անցավ: Սակայն ՍԱՍ-ի Արտակին, կարծես, քաղաքական

ղեկավարության փոփոխությունը չխանգարեց պահպանել կապերն իշխանության հետ: Իսկ նրան ուղղված նախկին հրապարակային պահանջներն աստիճանաբար դուրս մնացին օրակարգից:

Եվ այստեղ ակամա հիշում ես Սարգսյանի պատգամավորական կենսագրության գրեթե զավեշտական մի դրվագ: Հինգ տարվա ընթացքում նա ոչ մի անգամ չէր խոսել խորհրդարանի ամբիոնից: Իսկ երբ մի անգամ փորձել էր տեղից խոսել, խոսափողը չէր աշխատել:

ՍԱՍ-ի Արտակը, սակայն, իշխանության հետ կարծես հիանալի լեզու էր գտնում նաև առանց խոսափողի: Հեղափոխական իշխանությունն էլ, ըստ ամենայնի, ժամանակի ընթացքում կորցրել էր նրանից բացատրություն պահանջելու նախկին համառությունը: